

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՄՈՒՐԱԴՅԱՆ ԴԱՎԻԹ ՕՐԱՆԻ

### ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈւՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ը.00.03. - «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր  
Վ.Լ.Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր  
Վարդան Բաբկենի Բոստանջյան

տնտեսագիտ. դոկտոր, պրոֆեսոր  
Գևորգ Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2013թ. հունիսի 28-ին ժամը 15:00-ին Երևանի պետական համալսարանում տնտեսագիտության թիվ 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գրադարանում

Սեղմագիրն առաքված է 2013թվականի մայիսի 27-ին:

015 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
Կելս. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Ա.Յ.Առաքելյան

## Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

**Չետազոտության թեմայի արդիականությունը:** Ներկայումս նույնիսկ որոշ զարգացած երկրների պետական ֆինանսները, մասնավորապես պետական պարտքի ահռելի մեծության հետևանքով, հայտնվել են աղետալի ճգնաժամային վիճակում, ինչը զլորբալացման, պետությունների ֆինանսական համակարգերի խիստ սերտաճման պայմաններում լուրջ խնդիրներ է առաջադրում նաև մյուս՝ ֆինանսապես առավել կայուն երկրների համար: Պետական ֆինանսների կարգավորման գործընթացում գերակա դերը պատկանում է հարկաբյուջետային՝ մասնավորապես դրա բաղկացուցիչը կազմող հարկային քաղաքականությանը: Քանի որ հարկային եկամուտները հանդիսանում են պետական կենտրոնացված դրամական միջոցների ձևավորման հիմնական աղբյուրը, դրանք կազմում են ընդհանուր պետական եկամուտների 80-90 տոկոսը, և պետական պարտքի կրճատման գործընթացում կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական բյուջեների հարկային մուտքերի ավելացումը, ինչը մեծապես կախված է արդյունավետ հարկային քաղաքականության իրականացումից: Վերոհիշյալ պայմաններում հարկային քաղաքականության արմատական բարեփոխումների անհրաժեշտություն է առաջանում:

Հարկերը տնտեսագետտեսաբանների կողմից դիտարկվում են նաև որպես ժամանակակից բարեփոխումների կարևոր սոցիալ-տնտեսական բաղկացուցիչ, որոնց օգնությամբ պետությունը կարող է իրականացնել նաև արդյունավետ սոցիալական քաղաքականություն: Տնտեսական մյուս լծակների հետ, կենտրոնացված դրամական ֆոնդերը համալրելուց բացի, հարկերը պետք է օգտագործվեն կայուն զարգացում ապահովելու և տնտեսական ակտիվությունը խթանելու, ինչպես նաև սոցիալական արդարության տարրերն արմատավորելու ուղղություններով:

Հարկերի բնույթի պարզաբանումը, հարկման հիմնախնդիրները եղել են դեռևս հնադարի մտածողների ուշադրության կենտրոնում: Ավելի ուշ օտարագրի գիտնականների երկար շարքից տնտեսության հարկաբյուջետային կարգավորման հիմնախնդիրներին անդրադարձել են Ա.Մարշալը, Ն.Մենքյուն, Բ.Բոլդիրևը, Վ.Կովալյովան, Տ.Յուտկինան և ուրիշներ:

ՀՀ հարկային քաղաքականության ձևավորման ու կայացման առանձնահատկությունների բացահայտմանը նվիրված հայրենական հետազոտությունները զգալիորեն նպաստել են տվյալ բնագավառում առկա հարաբերությունների կանոնակարգմանը և անհրաժեշտ մեթոդական հիմքերի ստեղծմանը: Վերջիններս հետազոտել են տնտեսության հարկաբյուջետային կարգավորման, հարկային համակարգի արդյունավետության բարձրացման, հարկերի դասակարգման հիմնախնդիրները: Տարբեր ուղղություններով հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հետ առնչվող հարցերին անդրադարձել են Վ.Բոստանջյանը, Գ.Կիրակոսյանը, Վ.Հարությունյանը, Հ.Ղուշյանը, Մ. Սաֆարյանը, Ա.Մարկոսյանը և ուրիշներ:

Սակայն գլաբալացման պայմաններում հարկերի, հարկային քաղաքականության բնույթի փոփոխությունների դրսևորումները, տնտեսական աճի տեմպերի պահպանումը, վճարողների միջև «հարկային բեռը» հավասար բաշխելու հիմնախնդիրները դեռևս պահանջում են հարկային քաղաքականության կատարելագործում՝ վերջինի նշանակությունն ու դերը, արդյունավետությունը բարձրացնելու միջոցով: Ատենախոսությունը նվիրված է հարկային քաղաքականության հիմնախնդիրների ուսումնասիրմանը, վերջինիս արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտեցումների, միջոցառումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված են հետազոտության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

**Ուսումնասիրության առարկան և օբյեկտը:** Չետազոտության առարկան հարկային քաղաքականության կատարելագործման հիմնախնդիրներն են, որոնք քննարկվել են ընդհանուր տնտեսական, ֆինանսական և հարկային

քաղաքականությունների համատեքստում: Հետազոտության օբյեկտը ՀՀ-ում իրագործվող հարկային քաղաքականությունը և վերջինիս բաղկացուցիչներն են:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Հետազոտության նպատակն է հարկային քաղաքականության վերաբերյալ առկա մոտեցումների ուսումնասիրության, ՀՀ-ում և այլ երկրներում կիրառվող հարկային քաղաքականությունների արդյունավետության գնահատման արդյունքում մշակել վերջինիս բարձրացմանն ուղղված գործուն, հիմնավորված միջոցառումների համակարգ:

Այդ նպատակին հասնելու համար առենախոսության շրջանակներում առաջադրվել են հետևյալ խնդիրները`

- ուսումնասիրվել են հարկերի, հարկային քաղաքականության հիմնական հասկացությունների տեսական հիմքերը, ինչպես նաև դրանց արտացոլումը գործող հարկային օրենսդրության մեջ,
- հետազոտվել են հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման վերաբերյալ տեսական հիմնական մոտեցումները, գործնականում կիրառվող մեթոդները,
- վերլուծվել է հանրապետությունում հարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների իրականացման տնտեսական և իրավական հիմքերը,
- մշակվել է «հարկային բեռի» հաշվարկման նոր` իրատեսական, մոտեցում,
- հաշվարկվել է «հարկային բեռի» ցուցանիշը, ուսումնասիրել դրանում ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնակցության աստիճանը,
- բացահայտվել է ֆինանսական քաղաքականության բաղկացուցիչների ազդեցությունը հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման համատեքստում,
- բացահայտվել է գլոբալացման պայմաններում տարբեր երկրների հարկային քաղաքականությունների առանձնահատկությունները,
- վերլուծվել է ՀՀ-ում իրականացվող հարկային քաղաքականության և դրա բաղկացուցիչների արդյունավետությունը և բացահայտվել նշված բնագավառում առկա թերությունները,
- մշակվել են ՀՀ հարկային քաղաքականության և դրա բաղկացուցիչների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

**Հետազոտության տեսանթոդաբանական հիմքերը և տեղեկատվական ապահովումը:** Առենախոսության տեսական հիմք են ծառայել տնտեսագիտության, ֆինանսների տեսության, ֆինանսական վերլուծության ու գնահատման արտասահմանյան և հայրենական հեղինակների աշխատությունների ուսումնասիրությունները և դրանց համակարգված վերլուծությունները:

Հետազոտության տեղեկատվական հիմք են հանդիսացել հանրապետությունում հարկաբյուջետային հատվածը կարգավորող ՀՀ օրենքները, նորմատիվ իրավական այլ ակտեր, ՀՀ կառավարության որոշումները, գերատեսչական նորմատիվ ակտերը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերն ու վիճակագրական տվյալները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են, տնտեսավիճակագրական, մաթեմատիկական, համակարգային, համեմատական վերլուծության մեթոդներ:

**Հետազոտության գիտական նորույթը:** Առենախոսության հիմնական գիտական արդյունքները ու նորույթը կայանում է հետևյալում .

- Ներկայացվել է գլոբալացման պայմաններում հարկի միջազգային բաշխողական բնույթը, երբ արտաքին պետական պարտքի ու միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների վարկերի տոկոսագումարների մարման միջոցով առավել թույլ զարգացած երկրներում վճարված հարկերը վերաբաշխվում են հարկատու երկրների միջև` համալրելով վերջիններիս բյուջեները: Վերլուծվել է նաև տարբեր երկրների հարկային քաղաքականությունների միասնականացման,

համահարթեցման գործընթացը, ինչը ոչ միշտ է համապատասխանում առանձին անկախ երկրի շահերին:

- Մշակվել և առաջարկվել է գործնականում կիրառել հարկային բեռի գնահատման նոր մոտեցում, համաձայն որի՝ հարկային բեռի հաշվարկման հիմքում ընկած են և՛ հավաքագրված հարկերի մեծությունը, և՛ պետության կողմից հարկ վճարողներին հատկացված ֆինանսավորման միջոցները:
- Մշակվել է շահութահարկի դիֆերենցված դրույքաչափերի սանդղակի և «նվազագույն շահութահարկի» դիֆերենցված մեթոդաբանություն, որի հիմքում ընկած են առևտրային կազմակերպությունների շահութաբերությունը:
- Վերլուծվել, հիմնավորվել և գնահատվել է վերանայել օտարերկրյա ներդրումների խրախուսման նպատակով շահաբաժինների չհարկման արտոնությունը՝ ըստ շահութահարկի, և այդ հիմքերով առաջարկվել է վերանայել շահութահարկի գործող արտոնությունները բոլոր կազմակերպությունների համար և կատարել համապատասխան «դիֆերենցված մոտեցում»:

***Չետագոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:***

Աշխատանքում առաջարկված տեսական մոտեցումները կարող են կիրառվել հարկային քաղաքականության և դրա բաղկացուցիչների հետագոտմանը վերաբերվող ատենախոսություններում և աշխատություններում: Ատենախոսության մեջ արտացոլված առաջարկությունները կնպաստեն ՀՀ պետական բյուջեի հարկային մուտքերի շարունակական ավելացմանը, և կիրառվող հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

***Ատենախոսության կառուցվածքը:***

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 143 մեքենագիր էջի վրա:

## ***Ատենախոսության հիմնական բովանդակությունը.***

Ներածությունում հիմնավորվել է աշխատանքի արդիականությունը, տրվել են նպատակը, խնդիրները, գիտական նորույթը:

*Ատենախոսության առաջին՝ «Հարկային քաղաքականության ձևավորման առանձնահատկությունները և դրա արդյունավետության վերլուծության տեսամեթոդաբանական հիմքերը»* գլխում արտասահմանյան և հայրենական տնտեսագետների տեսական մոտեցումների ուսումնասիրության արդյունքում պարզաբանվել են «հարկ», «հարկային քաղաքականություն», «հարկային քաղաքականության արդյունավետություն» հասկացությունների էությունը, տնտեսագիտական բովանդակությունը:

Յուրաքանչյուր երկրի կայուն և շարունակական սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական նախապայմանը հանդիսանում է պետության կողմից արդյունավետ տնտեսական քաղաքականության կիրառումը, որի կարևորագույն բաղադրիչներից է հարկային քաղաքականությունը, ինչն ապահովում է պետությանը իր գործառույթները իրականացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ձևավորումը և միաժամանակ խթանում երկրում ներդրումների ծավալների աճը, ձեռնարկատիրության զարգացումը, հետևաբար և հասարակության բարգավաճումը:

Հարկի, հարկման բնույթի, նպատակի, նշանակության, դրանց ձևերի բացահայտման նպատակով հեղինակը նկատում է, որ հարկի առաջացման հիմնական նախադրյալը նախ պետությունների ձևավորումն է՝ մասնավորապես հանրապետական ձևի պետությունների ձևավորումը: Դեռևս անտիկ դարաշրջանի փիլիսոփա Պլատոնը գտնում էր, որ երկրի օրենքները՝ այդ թվում նաև հարկումը կարգավորող օրենսդրությունը, պետք է նպատակ ունենա *«մարդկանց երջանիկ դարձնելը»*, իսկ Արիստոտելը նշում է, որ տնտեսական քաղաքականության նպատակը պետք է լինի *«գտնել միջոցներ, որպեսզի քաղաքացիների բարեկեցությունը լինի հարատև»*:

Բուրժուական հեղափոխությունների արդյունքում ստեղծված հասարակական և տնտեսական նոր համակարգերը պահանջում էին պետական եկամուտների ձևավորման, այսինքն՝ հարկահավաքման նոր՝ առավել կատարելագործված ձևեր, որոնց վերաբերյալ իրենց մոտեցումները, տեսություններն են մշակվել տվյալ ժամանակաշրջանի դասական մտածողները, և որոնք մինչ օրս չեն կորցրել իրենց արդիականությունն ու ընկած են ժամանակակից հարկային քաղաքականության մշակման և իրականացման հիմքում: Մասնավորապես հեղինակի կողմից ներկայացվել է Ա. Սմիթի տեսությունը, ով առաջինն է մշակել ժամանակակից հարկման սկզբունքները, որոնք ձևակերպվել են մի շարք տեսական հիմնադրույթների հիմնավորման արդյունքում: Ա.Սմիթի կենտրոնական գաղափարը հանգում է նրան, որ տնտեսությունը լավ է գործում, եթե բացառվում է պետության կողմից վերջինիս կարգավորումը: Ըստ Ա. Սմիթի՝ հարկման հիմնական սկզբունքներն են՝ նպատակահարմարությունը, արդարացիությունը, հստակությունը, և պետք է մշակվեն այնպիսի հարկեր, որոնք չպետք է ժողովրդի գրպանից վերցնեն առավել քան նրանք տալիս են պետության գանձապետարանին: Ինչպես նշել է Յուտկինան. *«Սկզբունքները, որոնք առաջին անգամ նշվել են Ա.Սմիթից շատ ավելի շուտ, ծառայել են որպես հարկման կատարյալ տարբերակին շարժման փիլիսոփայական ուղեցույց: Հենց նշված սկզբունքներն են որոշում «հարկ» տնտեսական կատեգորիայի ներքին ներուժը»*<sup>1</sup>:

Ամփոփելով հայրենական տեսաբանների տեսակետները՝ հեղինակը նշում է, որ նրանք առանձնակի չեն անդրադարձել հարկերի էության տեսական հիմնավորումներին և հիմնականում ներկայացնում են գործող օրենսդրության կողմից տրված սահմանումը: «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով կատարվող համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից, հիմնարկներից,

<sup>1</sup>Т.Ф.Юткина Налоги и налогообложение. М. 1998. с. 32.

պետական ինքնակառավարման մարմիններից հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում»<sup>2</sup>:

Հարկային քաղականաճանաչության տեսական հիմքերի հետագա զարգացման տեսանկյունից հեղինակը նկատում է, որ XX դարի սկզբներին մեծ ճգնաժամի պայմաններում հանդես եկավ Ջ.Մ.Քեյնսը, ով տնտեսական մտքի նոր ուղղության սկիզբը դրեց, որն էլ հիմնադրի պատվին կոչվեց քեյնսականություն: Ջ.Քեյնսը վերանայեց Ա.Սմիթի՝ ազատական տնտեսական համակարգին վերաբերվող հիմնարար տեսակետները՝ առաջարկելով տնտեսության բյուջետային ֆինանսավորման, տոկոսադրույքների կարգավորման միջոցով պետական կարգավորման կուռ մեխանիզմ. ըստ էության, հարկաբյուջետային նոր քաղաքականության տեսությանը հիմք դրվեց: Հեղինակի պնդմամբ Ջ.Քեյնսի կողմից առաջարկվող դեղատոմսերի՝ պետական կարգավորող գործառույթի ուժեղացման մասին տեսակետը թելադրված էր առաջին հերթին 1929-1932թթ. տնտեսական խորը ճգնաժամով, որը արդյունք էր տնտեսության խորը փոփոխությունների, ինչը պայմանավորված էր մենաշնորհային մոնոպոլիաների ի հայտ գալով, որոնք թելադրում էին շուկայի գործելու կանոնները՝ անտեսելով ընդհանուր տնտեսության զարգացման պահանջները, ինչը հակասում էր ազատ մրցակցային շուկայի բնույթին: Ճգնաժամի պայմաններում Քեյնսն առաջակում է ավելացնել պետական կապիտալ ներդրումները ի հաշիվ համապատասխան հարկային քաղաքականաճանաչության միջոցով պետության միջոցների ավելացման: Պետք է արձանագրել, որ հենց վերջին մոտեցումն էլ ընկած է եղել ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների հարկաբյուջետային քաղաքականությունների հիմքում:

Հաջորդ կարևորագույն տնտեսագիտական տեսությունը, որն ընկած է ժամանակակից պետությունների կողմից կիրառվող տնտեսական՝ այդ թվում նաև ֆինանսական քաղաքականության հիմքում, նոր դասականների կողմից որդեգրված տեսական ուղղությունն է, ինչը նախորդ դարի 70-ական թթ. կեսերին ծագած համաշխարհային տնտեսական ճգնաժամի արդյունքն էր: Տնտեսության զարգացման հիմքում դնելով տնտեսավարող սուբյեկտի և անհատի վարքագիծը, առաջնային տեղ հատկացնելով տնտեսության միկրոնակարգակի հիմնախնդիրները, ի հակակշիռ քեյնսականների, նոր դասականները մշակեցին կատարյալ (ազատ) մրցակցության շուկայի տեսական մոդելը: Նոր դասականների առաջատարներից մեկը՝ Մ.Ֆրիդմանն առաջնությունը տալով ազատ մրցակցային շուկայական համակարգին, և ինչպես Ա. Սմիթը տնտեսական համակարգում մեծ տեղ չէր հատկացնում պետությանը: Ընդհանուր առմամբ նոր դասականներն անհրաժեշտ են համարում պետության այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են մասնավոր սեփականության և մրցակցության պաշտպանությունը, հարկային այնպիսի քաղաքականության իրագործումը, որը նպաստում է ձեռնարկատիրության զարգացմանը և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, ոչ ինֆլացիոն դրամաշրջանառության կազմակերպումը:

Անդրադառնալով նոր դասականների հաջորդ ներկայացուցիչների՝ ամերիկյան տնտեսագետներ Ա.Լաֆֆերի և Ջ.Գիլդերի առաջադրած տնտեսություններին՝ ընդգծում է, որ նրանք *ձեռնարկատիրության կարևորագույն միջոցը համարում են պետության հարկային քաղաքականությունը, ինչն էլ առաջարկվեց էապես փոխել՝ իջեցնելով հարկերի դրույքաչափերը, ընդ որում՝ առավել նկատելի իջեցնել բնակչության ունևոր խավերի հարկային բեռը*: Ենթադրվում էր, որ արտադրության ընդլայնման հետ ստագնացիայից տնտեսության դուրս գալով բյուջեն կհամարվի ավելի մեծ եկամուտներով հարկերի նույնիսկ ավելի ցածր դրույքաչափերի դեպքում: Հետևաբար խրախուսվում էր ձեռնարկատիրական գործունեությունը, որպես արտադրության աճի հիմնական գործոն: Նկատենք, որ Ա.Լաֆֆերը սահմանել է հարկային դրույքաչափերի մակարդակի և բյուջեի եկամուտների միջև մաթեմատիկական կախվածությունը, որի համաձայն եթե հարկերի դրույքաչափերը բարձրացված են օպտիմալ մակարդակից, ապա տնտեսական ակտիվությունը նվազում է և ձեռնարկատերերի մի մասն անցնում է

<sup>2</sup> «Հարկերի մասին» ՀՀ օրենքը: Ընդունված է 14.04.1997թ.: Հոդվ. 3:

«ստվեր»: Սակայն, հեղինակի պնդմամբ «Լաֆֆերի կորով» արտահայտված կախվածությունը ոչ միշտ է ճիշտ արտացոլում որևէ երկրի հարկային քաղաքականության արդյունավետությունը, ինչը մեծապես կախված է տվյալ երկրում գործող բյուջետային ծախսերի կառուցվածքից:

Աշխատանքում նշվում է, որ «հարկ», «հարկային քաղաքականություն» հասկացությունների էության պարզաբանմանն անդրադարձել են նաև արևելյան, այդ թվում նաև հայրենական տեսաբանները, ուստի ներկայացվել են նաև հետազոտվող երույթների վերաբերյալ վերջիններիս տեսակետները, քանի որ հենց դրանք են ընկած մեր երկրի հարկային քաղաքականության մշակման և կիրառման հիմքում: Պետք է նշել, որ տնտեսագիտական գրականության մեջ բացակայում է հարկային քաղաքականության վերաբերյալ միասնական մոտեցումը: Ընդհանրապես շեշտադրվում է այն փաստը, որ այն պետության տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մասն է և հենց հարկային քաղաքականությունն է ձևավորում երկրի հարկային համակարգի բնույթը և նպատակները<sup>3</sup>:

Ամփոփելով միջազգային և հայրենական տեսաբանների՝ հարկերի և հարկային քաղաքականության բնույթի, դրսևորման ձևերի, նպատակների վերաբերյալ տեսական մոտեցումները՝ ներկայացվել են սեփական մոտեցումներ վերջիններիս վերաբերյալ ժամանակակից տնտեսական հարաբերությունների տեսանկյունից՝ մասնավորապես գլոբալացման գործընթացների զարգացման պայմաններում: Ինչպես հայտնի է, ժամանակակից համաշխարհային տնտեսությունը ենթարկվում է համատարած ինտեգրման, որի հետևանքով գլոբալացման են ենթարկվում ոչ միայն զուտ արտաքին տնտեսական, այլ նաև բոլոր երկրների ներքին տնտեսական հարաբերությունները, այդ թվում՝ ֆինանսական հարաբերությունները, որոնք իրենց խորը ազդեցությունն են թողնում նաև հարկային, բյուջետային, դրամավարկային, ներդրումային քաղաքականությունների վրա: Վերը ներկայացված տնտեսագիտական տեսությունները, մոտեցումները չեն դիտարկում գլոբացման ազդեցությունը, մասնավորապես հարկի, հարկային քաղաքականության բնույթի, բովանդակության, կիրառման ձևերի վրա, ինչը այսօր անհրաժեշտ է հետազոտել, առանց որի անհնար է մշակել և իրականացնել արդյունավետ հարկային քաղաքականություն: Մասնավորապես նշվում է, որ գլոբալացման արդյունքում խիստ անհրաժեշտություն է առաջանում կոորդինացնել տարբեր երկրների հարկային քաղաքականությունները, որպեսզի ձեռնարկատերերը, որոնք գործունեություն են ծավալում մի շարք երկրներում, չհանդիպեն խոչընդոտների՝ ի դեմս տարբեր երկրներում գործող ներդրումային, այդ թվում նաև հարկավորման տարբեր պայմանների: *Ներկայումս հիմնականում դժվար է մատնանշել մի երկիր, որն իրականացնում է անկախ հարկաբյուջետային, դրամավարկային, ներդրումային քաղաքականություն:*

Վերոհիշյալի վառ օրինակն է միջազգային տարբեր կազմակերպությունների ստեղծումը, որոնք հենց կոչված են իրականացնել տարբեր երկրներում տնտեսավարման իրավիճակների համահարթեցում, միասնականացում: Օրինակ՝ ԱԲՀ կոորդինացում, համաձայնեցում է անդամ երկրների դրամավարկային քաղաքականությունները, ինչը կարևոր նշանակություն ունի նաև հարկային քաղաքականության մշակման տեսանկյունից: ԱՀԿ, որդեգրելով այսպես կոչված «խտրականության բացառման» սկզբունքը, պարտադրում է անդամ երկրներին իրականացնել գրեթե միևնույն (ինքնուրույն թողնելով միայն հարկային, մաքսային դրույքաչափերի միջակայքում մանկրելու հնարավորությունը) մաքսային և հարկային քաղաքականություն մասնավորապես տարբեր երկրների ապրանքատեսակների նկատմամբ: Իսկ Եվրոխորհուրդը անդամության հիմնական պայման համարում է երկրներում գործող օրենքների՝ այդ թվում նաև տնտեսական օրենքների համապատասխանեցումը ժողովրդավարությանը: Այսպիսով, *գլոբալացման արդյունքում*

<sup>3</sup>Финансы: учебник / Под ред. В.В.Ковалева. – М.: ТК Велби, Изд-во Проспект, 2004. с. 106.

*տարբեր երկրների հարկային քաղաքականությունները միջազգային մասշտաբով միասնականացվում, համահարթեցվում են որոշ դեպքերում նույնիսկ ի վնաս որևէ կոնկրետ երկրի շահերին: Նշվում է նաև, որ նշված միջազգային կազմակերպությունների հիմնադիրներ և մեծ ֆինանսական մասնաբաժին ունեցողները հանդիսանում են զարգացած երկրները, և, բնականաբար, նրանց կողմից մշակված օրենքները հիմնականում առավել արդյունավետ են հենց այդ երկրների տեսանկյունից իրենց հզոր կորպորացիաների համար, ուստի երկրների հարկային, ներդրումային քաղաքականությունների միասնականացումը առավել հարմարավետություն է ապահովում հենց իրենց, այլ ոչ թե առավել թույլ զարգացած երկրների ձեռնարկատերերի համար, որոնք առավել թույլ մրցակցային հնարավորություններ ունեն:*

Բացի այդ, մատնանշում է, որ միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունները, ելնելով այն հանգամանքից, որ նոր զարգացող երկրների ֆինանսական հնարավորությունները բավարար չեն երկրի թե՛ սոցիալական և թե՛ տնտեսական զարգացումն ապահովել, տրամադրում են միջազգային վարկեր և բազմաթիվ պահանջներ են առաջադրում՝ այդ թվում հարկային, վարկային ներդրումային բարեփոխումների բնագավառում: Յետևաբար, վարկ ստացող երկիրը ոչ միայն վարկի տոկոս է վճարում վարկավորող երկրներին իր երկրում հավաքագրված հարկերի հաշվին, այլև նորից հարկերի միջոցով ֆինանսավորում է այդ երկրների տնտեսությունը: Եվ եթե Քեյնսը նշում էր պետական պարտքի(հարկե նկատի ունի ներքին պարտք) նշանակությունը որպես տվյալ երկրում պետական ներդրումների աղբյուր, ապա ժամանակակից գլոբալացման պայմաններում արտաքին պետական պարտքի միջոցով առավել թույլ զարգացած երկրներում հավաքագրված հարկերը միջպետական, միջազգային վարկերի և դրանց տոկոսների ձևով վեր են ածվում վարկատու երկրների բյուջեների համալրման աղբյուրի և ապահովում վերջիններիս տնտեսության աճը:

Վերոհիշյալից ելնելով աշխատանքում նախ պարզաբանվել է հարկի էության փոփոխությունները ժամանակակից իրավիճակում: Բազմիցս նշվել է, որ հարկը յուրաքանչյուր պետության գործառույթները իրականացնելու համար անհրաժեշտ միջոցների ձևավորման միջոց է հանդիսանում, ինչն իրականացվում է տվյալ երկրում ստեղծված ՀՆԱ-ի և ազգային եկամտի հարկերի միջոցով վերաբաշխման արդյունքում: Վերոհիշյալից ելնելով հստակորեն նշվում է, որ *ներկայումս հարկի վերաբաշխողական բնույթը միջազգայնացվել է, և մի երկրում ստեղծված ՀՆԱ-ն հարկի միջոցով վերաբաշխվում է ոչ միայն տվյալ երկրում, այլ նաև արտաքին պետական պարտքի միջոցով վերաբաշխվում է այլ երկրների՝ որպես կանոն զարգացած երկրների միջև:*

Կարևորելով հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործընթացում դրա գնահատման գործուն, իրատեսական մեթոդաբանության առկայությունը՝ատենախոսությունում հիմնավորվել է, որ հարկային քաղաքականության արդյունավետության որոշման նպատակով պետք է հստակեցնել դրա յուրաքանչյուր բաղադրիչի բովանդակությունը, տեղն ու դերը վերջինիս իրականացման գործընթացում, յուրաքանչյուրի արդյունավետության որոշման ցուցանիշները, որոնք էլ կկազմեն գնահատման ցուցանիշների համակարգը, քանի որ դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը ընդհանուր հարկային քաղաքականության արդյունավետության վրա կարող է տարբեր լինել: Օրինակ, ՀՀ-ում կիրառվող հարկային մեխանիզմն իր բնույթով բավականին մեղմ է, սակայն հարկային վարչարարության կոշտությունը հարկային քաղաքականությունը ընդհանուր առմամբ դարձնում է կոշտ:

Անփոփելով մի շարք տեսաբանների մետեցումները, նշվում է, որ ընդհանուր առմամբ հարկային քաղաքականության հիմնական բաղադրիչներ համարում են դրա նպատակների, խնդիրների որոշումը, առաջադրված նպատակների, խնդիրների

իրականացման համար կազմակերպական ձևերի, մեթոդների, միջոցների մշակումը<sup>4</sup>, ըստ էության՝ հարկային մեխանիզմի ստեղծումը. վերջին խումբը ավելի շուտ հարկային վարչարարության տարրեր են ներկայացնում (տնտեսության սուբյեկտների հարկերի վճարման գործընթացի կառավարումը<sup>5</sup>): Ելնելով վերոհիշյալից՝ հեղինակը նկատում է, որ հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման կարևորագույն ցուցանիշը պետք է արտացոլի վերջինիս հիմնական նպատակի իրականացումը: *Յեղինակի պնդմամբ ինչպես մատնանշել են դեռևս անտիկ դարաշրջանի մտածողները, հարկային քաղաքականության հիմնական և միակ նպատակը պետք է լինի «մարդկանց երջանիկ լինելը» կամ «մարդկանց բարեկեցության հարատև աճը», ժամանակակից տերմինալոգիայով արտահայտված բնակչության բարեկեցությունը, այսինքն՝ հարկային քաղաքականության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշը պետք է հանդիսանա բնակչության կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները: Ինչ վերաբերվում է տնտեսության զարգացմանը, ապա դա միայն միջոց է հիմնական նպատակին հասնելու համար, ինչը բնութագրող ցուցանիշներն են ՀՆԱ-ի, ապրանքաշրջանառության, արտաքին առևտուրը բնութագրող, ներդրումների, դրամաշրջանառության ծավալների և դրանց աճի տեմպերը որոշող ցուցանիշները:*

Ամփոփելով տնտեսագիտական գրականության մեջ առկա մոտեցումները՝ նշվում է, որ չկա հարկային քաղաքականության բաղադրիչների վերաբերյալ հստակ, միասնական կարծիք, մասնավորապես *«հարկային համակարգ»*, *«հարկային մեխանիզմ»*, *«հարկային վարչարարություն»* հասկացությունների վերաբերյալ մասնավորապես նշվում է որպես կանոն կամ դրանք նույնացվում են կամ թերի են ներկայացվում, կամ էլ կրկնօրինակում են մեկը մյուսին: Ատենախոսությունում ցույց է տրված հարկային քաղաքականության կարևորագույն տարրերն են հարկային մեխանիզմը և հարկային վարչարարությունը, որոնց արդյունավետությունից է կախված ընդհանուր հարկային քաղաքականության արդյունավետությունը: Ինչ վերաբերվում է *«հարկային համակարգ»* հասկացության բովանդակությանը, ապա այն իրենից ներկայացնում է հարկային մեխանիզմի և հարկային վարչարարության ամբողջությունը, այսինքն՝ հարկային համակարգի միջոցով է իրականացվում հարկային քաղաքականությունը իր հիմնական նպատակը իրագործելու գործընթացում: Հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման տեսանկյունից կարևորագույն ցուցանիշի՝ *հարկային բեռի ծանրությունը անմիջականորեն պայմանավորված է հարկային մեխանիզմի արդյունավետության մակարդակից, իսկ հարկային վարչարարությունը անուղղակիորեն է ազդում վերջինիս վրա, սակայն չափից դուրս կոշտ վարչարարության կիրառումը կարող է լուրջ բացասական հետևանքներ ունենալ ընդհանուր հարկային քաղաքականության արդյունավետության մակարդակի վրա:*

Ամփոփելով, նշվում է, որ հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմքում արտասահմանյան և հայրենական տեսաբանները տեսնում են հարկային բեռի ծանրության կրճատումը, որը նրանց կարծիքով տնտեսավարող սուբյեկտների ներդրումային ներուժը մեծացնելով խթանում է տնտեսության աճը, կրճատում ստվերային տնտեսության ծավալները՝ դրանով իսկ ուղղակիորեն ազդելով պետական բյուջե հարկային մուտքերի աճին, նպաստում հասարակության անդամների բարգավաճման հնարավորությունների մեծացմանը: Մինչ վերջին տարիների ֆիանանսական ճգնաժամը, պետությունների մեծամասնությունը՝ այդ թվում նաև ԱՊՀ երկրները, հարկային բեռի ծանրության մակարդակի հետ կապված կիրառվող հարկային քաղաքականության հիմք էին վերցնում նոր դասականների տեսությունը:

Ներկայումս միջազգային պրակտիկայում՝ այդ թվում նաև ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության սկզբունքների համաձայն, ընդունված է հարկային բեռի հաշվարկման հետևյալ ցուցանիշը՝ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի

<sup>4</sup> Финансы. Под ред. В.В.Ковалева М. 2004. с. 135.

<sup>5</sup> Финансы, денежное обращение, кредит Под ред. Л.А. Дробозиной М. 2001. с. 80.

հարաբերակցությունը: Ելնելով վերոհիշյալ տեսական հիմքերից մեր կարծիքով հարկային բեռի ծանրությունը պետք է դիտել բյուջետային ֆինանսավորման համատեքստում: Երբ հարկային ծանր բեռի պայմաններում թե՛ տնտեսվարող սուբյեկտը և թե՛ ֆիզիկական անձը պետական միջոցների հաշվին շատ ավելի մեծ «օգնություն», ավելի շուտ աջակցություն են ստանում, ապա հարկային բեռի ծանրությունը զգալիորեն թեթևանում է: Այդ նկատառումից ելնելով առաջարկում ենք վերը նշված «հարկային բեռի» ցուցանիշը(հավքագրված հարկերի / ՅՆԱ) համադրել պետական միջոցների հաշվին ՅՆԱ-ի ֆինանսավորման ծավալների (պետական բյուջեից տնտեսության իրական հատվածին տրամադրվող միջոցների ծավալի) ու սոցիալական ուղղության ծախսերի հանրագումարի և ՅՆԱ-ի հարաբերակցության հետ, որպեսզի որոշվի, թե որքանով է հարկային բեռի ծանրությունը թեթևանում պետական միջնաժամկետ ծրագրերի ֆինանսավորմամբ: Հեղինակի կարծիքով նման մոտեցումը առավել ճիշտ կարտացոլի տվյալ երկրի հարկային բեռի մակարդակը: Նման ձևով կարելի է գնահատել ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց հարկային բեռի ծանրությունը: Վերոհիշյալը բանաձևային արտահայտությամբ կունենա հետևյալ տեսքը.

հարկային բեռը = ( հավքագրված հարկերի / ՅՆԱ ) - [(պետական բյուջեից տնտեսության իրական հատվածին տրամադրվող միջոցների ծավալ + սոցիալական ուղղվածության ծախսերի հանրագումար) / ՅՆԱ] կամ էլ

հարկային բեռը = [( հավքագրված հարկերի) - [(պետական բյուջեից տնտեսության իրական հատվածին տրամադրվող միջոցների ծավալ + սոցիալական ուղղվածության ծախսերի հանրագումար)] / ՅՆԱ

Իրավաբանական անձանց տարբեր բյուջեներ վճարված հարկերի հանրագումարի և դրանց համախառն եկամտի հարաբերակցությունը պետք է համադրել բյուջեներից տնտեսության իրական հատվածին (քանի որ այս հատվածում է ստեղծվում ՅՆԱ-ն) հատկացված միջոցների և ՅՆԱ-ի հարաբերակցության հետ: Իհարկե, այս ցուցանիշի ճշգրտությունը ապահովելու համար անհրաժեշտ է հարկման ժամանակ առաջին մասի համարիչում ավելացնել նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող անհատ ձեռնակատերերի կողմից վճարված հարկերի, իսկ հայտարարում դրանց համախառն եկամտի գումարները:

Ֆիզիկական անձանց հարկային բեռի գնահատման համար անհրաժեշտ է նրանց կողմից վճարված հարկերի հանրագումարի և իրենց համախառն եկամտի հարաբերակցությունը համադրել պետության կողմից ֆինանսավորվող սոցիալական ծախսերի և նրանց համախառն եկամտի հարաբերակցության հետ: Հարկային բեռի հաշվարկման նման մոտեցումը հնարավորություն կտա որոշելու, թե հարկային բեռի որ մասն է ծածկվում պետական աջակցության, այնպիսիքն՝ ֆինանսավորման շնորհիվ: Մեր կարծիքով սրանում է առավելապես կայանում հարկային բեռի ծանրության թեթևացումը, այլ ոչ թե հարկային դրույքաչափերի իջեցման կամ զանձվող հարկատեսակների քանակի նվազեցման մեջ: Հենց սրանով էլ պայմանավորված է զարգացած երկրների հարկային քաղաքականության արդյունավետությունը, երբ որոշ երկրներում հարկային զանձումները հաճախ կազմում են տնտեսվարող սուբյեկտի կամ ֆիզիկական անձի համախառն եկամտի՝ որոշ դեպքերում նույնիսկ 50%-ը գերակշռող մասը, սակայն վերջիններս այդքան սուր չեն զգում հարկային բեռի ծանրությունը, քանի որ այն բավականին թեթևանում է պետական ֆինանսական աջակցության շնորհիվ:

*Ատենախոսության երկրորդ՝ «Հարկային քաղաքականության գնահատման մոտեցումները Հայաստանի Հանրապետությունում»* գլխում տրվել է ՀՀ հարկային քաղաքականության կայացման և զարգացման պատմական ակնարկը, ներկայացվել են դրա մշակման հիմքերը, կատարվել է ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականության արդյունավետության գնահատում:

Հետագոտելով ՀՀ հարկային քաղաքականության զարգացման գործընթացը հեղինակը նկատում է, որ մի տնտեսական համակարգից՝ վարչահրամայականից, մեկ

ուրիշին՝ շուկայական տնտեսավարման համակարգին, անցումը և դրա հետագա զարգացումը իր դրոշմն է դրել ՀՀ հարկային քաղաքականության բնույթի վրա, որը տարիների ընթացքում ենթարկվել է շարունակական բարեփոխումների և, ի վերջո, ձևավորվել է կոնկրետ ժամանակաշրջանին համապատասխան կուռ հարկային համակարգ: ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականության տեսական հիմքի պարզաբանման առումովատենախոսությունում անդրադարձ է կատարվել հայ տեսաբանների մոտեցումների քննարկմանը և, ամփոփելով դրանք, մատնանշել, որ վերջիններս մտավախություն են հայտնում այն փաստի շուրջ, որ միանշանակ չի կարելի ՀՀ-ում ներդնել զարգացած երկրներում առկա գործող հարկային քաղաքականության տեսական հիմքերը, քանի որ մեր երկրի առանձնահատկությունները(երկրաշարժ, շրջափակում, պատերազմ, նախկին տնտեսական կապերի խզում և այլն)թելադրում են երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակին համապատասխան նոր մոտեցումներ մշակել՝ իհարկե, հաշվի առնելով համաշխարհային փորձը:

ՀՀ հարկային քաղաքականության արդյունավետության գնահատման տեսանկյունից, ներկայացնելով ՀՀ-ում կիրառվող հարկային մեխանիզմի բաղադրիչները, նկատվում է, որ հայրենական հետազոտողները հիմնական շեշտը դրել են հարկային համակարգի կատարելագործման գործնական ուղղությունների ուսումնասիրության վրա և հազվադեպ են անդրադարձել «հարկ» և դրա հետ կապված այլ հասկացությունների տեսական խնդիրներին:Միգուցե դա է պատճառը, որ հայրենական օրենսդրությունը չունի այնպիսի հասկացությունների սահմանումներ ինչպիսին են «հարկումը», «հարկային համակարգը», «հարկային մեխանիզմը», ինչպես նաև «հարկի գործառույթները»: ՀՀ հարկային օրենսդրության մեջ հատուկ համակարգված ձևով պարզաբանված չէ նաև հարկման սկզբունքները, սակայն առանձին հոդվածներում անդրադարձել են այս կամ այն սկզբունքին<sup>6</sup>: Անդրադառնալով «Հարկ», «պարտադիր վճար», «տուրք» հասկացությունների էության պարզաբանմանը, ատենախոսությունում պարզաբանվում է, որ, չնայած դրանք ունեն որոշակի նմանություն՝ պետական եկամուտների ձևավորման աղբյուր են հանդիսանում, վճարման պարտադիրությունը, սակայն իրենց բնույթով տարբեր են, մասնավորապես սոցիալական ապահովագրության պարտադիր վճարը ըստ էության իրականում ապահովագրավճար է և ոչ մի կապ չունի հարկի հետ: Ճիշտ է, պետական բյուջեի հարկային եկամուտների կազմից, ըստ վերջին բյուջետային դասակարգման,վերջինս հանվել է, սակայն հարկ է նշել, որ պետք է դրանց վերաբերյալ օրենքներն էլ չներառվեն հարկային օրենսդրության կազմում: Սակայն միևնույն ժամանակ շեշտվում է, որ նշված վճարները հարկատուների տեսանկյունից հարկային բեռ են համարվում և վերջինիս հաշվարկման դեպքում անհրաժեշտ է անպայման հաշվի առնել դրանց մեծությունը:

Ելնելով այն հանգամանքից, որ պետական եկամուտների գերակշիռ մասը կազմում են հարկային եկամուտներն ու պետական տուրքերը, հեղինակն անդրադարձել է այդ մասին պաշտոնական տվյալներին<sup>7</sup>, և նկատում է, որ նորաստեղծ Հայաստանի Հանրապետության ստեղծման առաջին տարիներին, երբ կազմակերպությունների գերակշռող մասը պետական սեփականություն էին հանդիսանում և երկրի առջև ծառայել էին բազմաթիվ հիմնախնդիրներ, պետական ֆինանսական միջոցների ձևավորման գերակշռող բաժինը պատկանում էր հարկային եկամուտներին (մոտ 44-60%), սակայն մեծ էր նաև միջազգային կազմակերպություններից, այլ երկրներից ստացված պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշիռը՝ 21-45% սահմաններում: Բնականաբար, վերջիններիս տրամադրման նպատակը երկրում

<sup>6</sup>«Հարկերի մասին» ՀՀ օրենքը: Ընդունվել է 14.04.1997թ.: Հոդվածներ 3,5, 7

<sup>7</sup>Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007թ. ընթացքում: Ե. 2008թ. Էլեկ. տարբ. էջ 110-111: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. ընթացքում: Ե. 2009թ. Էլեկ. տարբ. էջ 106: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. ընթացքում: Ե. 2011թ. Էլեկ. տարբ. էջ 107-108: Ֆինանսներ և վարկ: Ուս. ձեռնարկ: Ե. 2003թ.: էջ 119:

հնարավորինս արագ կերպով նոր, իրենց համար հասկանալի տնտեսավարման համակարգի կայացումն էր: Այնուհետև դրանց տեսակարար կշիռը շեշտակի նվազել է և կազմել ՀՀ պետական բյուջեի եկամուտների 3-9%-ը: Պաշտոնական դրամաշնորհների տեսակարար կշռի աճ՝ մինչև 14,2%, գրանցվել է 2009թ., որը, ինչպես հայտնի է, կապված էր ֆինանսական ճգնաժամի ազդեցությունը մեղմելու հետ: Վերոհիշյալը ապացույցն է այն անվիճելի փաստի, որ հարկերը կատարելով ֆիսկալ գործառույթը, հանդիսանում են պետական ֆինանսական միջոցների ձևավորման հիմնական աղբյուրը, որով և պայմանավորված է հարկային քաղաքականության գերակա դերը պետական հարկաբյուջետային քաղաքականության համատեքստում:

Հարկային մեխանիզմի հետազոտման տեսանկյունից ուսումնասիրվել է նաև հարկատեսակների կառուցվածքը՝ ըստ դրանց բնույթի, ուղղակի և անուղղակի, պետական և տեղական հարկատեսակների: Փաստում է, որ տեղական բյուջեների հարկային եկամուտները ոչ միշտ են հանդիսանում դրանց ձևավորման հիմնական աղբյուրը, դրանց եկամուտների գերակշռող մասը կազմում են պետական բյուջեից վճարվող պաշտոնական դրամաշնորհները՝ ընդհանուր եկամուտների մոտ 40-60%: Միաժամանակ շեշտվում է, որ *հայրենական տնտեսագետների և քաղաքագետների կողմից բազմիցս նշվել է, որ դոտացիաների տրամադրմամբ նսեմացվում է տեղական ինքնակառավարման մարմինների ինքնուրույնությունը, դրանով իսկ կառավարությունը ներգործում է վերջիններիս բյուջետային ծախսային քաղաքականության վրա:*

Վերջին տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի հարկերի, տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների կազմի և կառուցվածքի հետազոտության արդյունքում փաստել է, որ գերակշռող հարկատեսակը հանդիսանում է ԱԱՀ, որը հանդիսանում է անուղղակի հարկատեսակ և կազմում է ընդհանուր եկամուտների 42-56%-ը<sup>8</sup>: Հատկապես ԱԱՀ-ի մասնաբաժինը պետական եկամուտների ձևավորման գործընթացում գերակշռող է դառնում ճգնաժամային իրավիճակներում, օրինակ՝ շեշտակի աճ է նկատվել 2009թ.-ին 2007թ.-ի նկատմամբ ընդհանուր հարկային եկամուտների 49%-ից դարձել է 56.6%, այսինքն՝ աճել է մոտ 8%-ով: Բնականաբար, երբ տնտեսությունը անկում է ապրում և մեծանում է գործազրկության մակարդակը, նվազում են այնպիսի հարկատեսակների հավաքագրումը, ինչպիսիք են շահութահարկը՝ համապատասխանաբար 14.9%-12.9%, եկամտահարկը՝ համապատասխանաբար 9.2%-8.5%, չնայած վերջինս գծով հետագայում նկատվել է աճի միտում: Հարկային համակարգի գնահատման տեսանկյունից ուսումնասիրվել է նաև ուղղակի և անուղղակի հարկատեսակների կառուցվածքը պետական բյուջեի եկամուտների նկատմամբ(աղյուսակ 1): Նշվում է, որ ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների գերակշռող մասը կազմում են անուղղակի հարկատեսակները՝ ընդհանուրի մոտ 65%-ը և տարիների ընթացքում այդ հարաբերակցությունը էական փոփոխության չի ենթարկվել: Իսկ ուղղակի հարկատեսակները կազմում են ընդհանուր եկամուտների նկատմամբ մոտ 27%-ը, այլ եկամուտները՝ մոտ 6-8%-ը:

ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատման կոնտեքստում համեմատելով տարբեր հարկատեսակների կառուցվածքը այլ երկրներում, մասնավորապես ԵՄ երկրներում առկա մասնատիպ կառուցվածքի հետ<sup>9</sup> առաջին

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007թ. ընթացքում: Ե. 2008թ. էլեկ. տարբ. էջ 110-111: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. ընթացքում: Ե. 2009թ. էլեկ. տարբ. էջ 106: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. ընթացքում: Ե. 2011թ. էլեկ. տարբ. էջ 107-108: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. ընթացքում: Ե. 2012թ. էլեկ. տարբ. էջ 106-107:

<sup>9</sup> Финансы. Под ред. В.В.Ковалева М. 2004. с. 81:

2007-2011թթ. ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկերի կազմի և կառուցվածքի փոփոխություններ (մլրդ. ՀՀ դրամ)<sup>10</sup>

Ցուցանիշներ		2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.
1.	Հարկային եկամուտներ <i>տոկոսով ընդհանուրին կատմամբ</i>	483.7 <i>100</i>	598.8 <i>100</i>	503.3 <i>100</i>	574.1 <i>100</i>	630.1 <i>100</i>
<i>այդ թվում</i>						
2.	Անուղղակի հարկեր <i>տոկոսով ընդհանուրին կատմամբ</i>	323.5 <i>66.9</i>	418.2 <i>69.8</i>	328.2 <i>65.2</i>	388.4 <i>67.7</i>	391.2 <i>62.1</i>
3.	Ուղղակի հարկեր <i>տոկոսով ընդհանուրին կատմամբ</i>	131.5 <i>27,2</i>	139.9 <i>23,4</i>	141.0 <i>28</i>	151.7 <i>26,4</i>	178.9 <i>28,4</i>
4.	Այլ հարկային եկամուտներ <i>տոկոսով ընդհանուրին կատմամբ</i>	28,7 <i>5,9</i>	40.7 <i>6,8</i>	33.8 <i>6,7</i>	32.0 <i>5,6</i>	48.0 <i>7,6</i>

Ատենախոսությունում նշվում է նաև, որ ԵՄ երկրներում գերակշռում են ուղղակի հարկերը՝ անձնական եկամուտների և շահույթի նկատմամբ, ինչպես նաև սոցիալական մոծումները: Դրանք կազմում են բյուջեների հարկային եկամուտների 80 տոկոսը: Մինչդեռ դրան զուգահեռ Հայաստանի Հանրապետության այդ ցուցանիշներն արտացոլող տողերի հանրագումարը 2009թ. կազմել է ընդհանուրի 28, 2010թ.՝ 26.4 և 2011թ.՝ 28.4 տոկոսը: Դրական պետք է դիտել այն, որ ԵՄ երկրների բյուջեներում շահութահարկը կազմում է 10 տոկոս, մինչդեռ ՀՀ-ում 2009--2011թթ. այդ հարկատեսակից մուտքերը կազմել են համապատասխանաբար 11.1 և 12.6 տոկոս: Հանրապետությունում մաքսատուրքն ունի մոտավորապես նույն տեսակարար կշիռն ինչ ԵՄ երկրներում է:

Անդրադառնալով ուղղակի և անուղղակի հարկատեսակների հարաբերակցության վերաբերյալ հայրենական տնտեսագետների մոտեցումներին՝ ատենախոսությունում նշվում է, որ դրանք միասնական են իրենց գնահատականներում, որոնց ընդհանրացված տարբերակ պետք է դիտել հետևյալը. անուղղակի հարկերի գերակշռումը ուղղակիի նկատմամբ մեկ անգամ ևս ապացուցում է այն փաստը, որը տնտեսական զարգացումը և բնակչության կեսամակարդակը բնութագրող ցուցանիշները, այն է՝ տնտեսվարող սուբյեկտների համար շահույթի, իսկ անհատների համար՝ անձնական եկամուտների մեծությունը դեռևս հեռու է բավարար, առավել ևս կատարյալ համարվելուց, և, հետևաբար, դրանց նկատմամբ հաշվարկված հարկերն էլ չեն կարող հանդիսանալ պետական բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուր, ինչպես զարգացած շատ երկրներում: Ամփոփելով վերոհիշյալ ուսումնասիրության արդյունքները՝ բացահայտվում է, որ ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականությունը, ինչի հիմքում ընկած է միջազգային կազմակերպությունների կողմից պարտադրված մոնետարիստական տեսությունը (տնտեսության զարգացմանը պետության միջամտության բացառում, ցածր հարկային բեռ կոորպորացիաների և ունևոր խավի նկատմամբ, նվազագույն հարկային արտոնությունների կիրառում, ուղղակի հարկատեսակների գերակշռում) առանց հաշվի առնելու մեր երկրի զարգացման առանձնահատկությունները՝ բնակչության գերակշռող մասի եկամուտների անհամեմատ ցածր մակարդակ, գործազրկության բարձր տեսակարար

<sup>10</sup> Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2007թ. ընթացքում: Ե. 2008թ. Էլեկ. տարբ. էջ 110-111: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. ընթացքում: Ե. 2009թ. Էլեկ. տարբ. էջ 106: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. ընթացքում: Ե. 2011թ. Էլեկ. տարբ. էջ 107-108:

կշիռը, տնտեսավարող սուբյեկտների սուղ ֆինանսական հնարավորությունները վերազգային հզոր կազմակերպությունների հետ մրցակցելու համար, անարդյունավետ է, քանի որ մեր հանրապետության նման նոր զարգացող երկրներում թերի զարգացած տնտեսության և սոցիալական սուր խնդիրների առկայության պայմաններում պետական եկամուտների համալրման գործընթացում շեշտադրումը դնել ուղղակի հարկատեսակների վրա իրատեսական չէ: Այդ մասին են վկայում վերը ներկայացված ցուցանիշները: Նման իրավիճակում պետությունը անխուսափելիորեն պետք է մասնակցի տնտեսության անմիջական ֆինանսավորման գործընթացին, այսինքն՝ ուղղակի ներդրումների ձևով, այլ ոչ թե վարկավորմամբ՝ հիմնականում միջազգային վարկերի հաշվին, որը, բնականաբար, մեծացնում է արտադրության և իրացման ծախսերը և մեր արտադրանքը դարձնում անմրցունակ: Որպեսզի տնտեսավարող սուբյեկտները մեղմացնեն վարկային բեռը, կրճատում են աշխատողներին վճարվող եկամուտները կամ անցնում են ստվերային տնտեսության վարմանը, իսկ պետությունը ստիպված պետական համապատասխան ֆինանսական միջոցների համալրման համար շեշտադրումը դնում է անուղղակի հարկատեսակների վրա: Այստեղից կարելի է հանգել հետևյալին, որ գլոբալացման արդյունքում տարբեր տնտեսական և սոցիալական իրավիճակում գտնվող երկրներում հարկաբյուջետային՝ մասնավորապես հարկային քաղաքականությունների միասնականացումը անարդյունավետ է հատկապես թերզարգացած երկրների համար: ԴՅ կառավարությունը պետք է հնարավորինս դիմակայի միջազգային կազմակերպությունների ճնշումներին, որոնք վնասաբեր են ԴՅ համար:

Գլոբալացման մյուս կարևորագույն բացասական հետևանքը հանդիսանում է արտաքին վարկեր ներգրավված երկրում հավաքագրված հարկերի վերաբաշխումը վարկատու երկրների միջև, որոնք վեր են ածվում վերջիններիս բյուջեների եկամտի աղբյուրի: Երևույթը առավել տեսանելի պատկերելու նկատառումով կազմվել է աղյուսակը 2-ը:

Աղյուսակ 2

2009-2011 թվականների ԴՅ պետական բյուջեի եկամուտների և արտաքին պարտքի փոփոխությունները (մլրդ ԴՅ դրամ)<sup>11</sup>

	Եկամտատեսակը	2007	2008	2009	2010	2011
1.	Հարկային եկամուտներ	483.7	598.8	503.3	574.1	630.1
2.	Պաշտոնական նրամաշնորհներ	15.0	30.5	32.4	42	56.0
3.	Արտաքին պարտքի սպասարկում	17.6	13.8	9.0	26.52	24.9
	<i>Այդ թվում</i>					
4.	Մարում	14.5	6.3	6.8	9.68	10.1
5.	Տոկոսագումար	3.1	7.5	4.2	16.84	14.8
6.	Հարկային եկամուտներ/Արտաքին պարտքի սպասարկում (%-ով)	3.6	2.3	1.8	4.6	4.0
7.	Տոկոսագումար/Հարկային եկամուտներ (%-ով)	0.6	1.3	1.4	2.9	2.3
8.	Արտաքին պարտքի սպասարկում/Պաշտոնական նրամաշնորհներ (%-ով)	117	45	27	67	44

<sup>11</sup> ԴՅ պետական պարտք, ԴՅ ֆինանսների նախարարության տարեկան հաշվետվություն 2007-2011 : Էլեկ. տարր

Հարկերի միջազգային վերաբաշխողական գործառույթի մակարդակը գնահատելու նպատակով ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները համեմատել է արտաքին պարտքի սպասարկման ծավալների և, ամենակարևորը, վճարվող տոկոսագումարի հետ: Ինչպես երևում է աղյուսակ 2-ի տող 6-ի և 7-ի տվյալներից, 2007թ. ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկերի 3.6 տոկոսը վերաբաշխվում է զարգացած երկրների միջև, իսկ պետական պարտքը սպասարկող տոկոսագումարների միջոցով վերաբաշխվել է 0.6տոկոսը: Նշվում է նաև, որ հաջորդ տարիներին նկատվում է նշված ցուցանիշների աճի միտում. առաջին ցուցանիշը 2008թ. կազմել է 2.3տոկոս, 2009թ.`1.8, 2010թ.` 4.6 և 2011թ.`4.0: 2008թ. և 2009թ. ցուցանիշի համեմատաբար ցածր մակարդակը պայմանավորված է համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքներով, իսկ հետագա տարիներին, քանի որ նախատեսված է երկարաժամկետ պարտքերի մարումներ, ապա զարմանալի չէ, որ գնալով ավելի է մեծանում ՀՀ-ում հավաքագրված հարկերի` այլ երկրներ վերաբաշխման ծավալները և տեսակարար կշիռը: Դրան գումարելով արտաքին պարտքի թանկացման հետևանքները` կապված ռեզերվային արտաժույթների փոխանակային կուրսերի բարձրացման հետ, աստիճանաբար մեծանում է ՀՀ-ում ստեղծված ՀՆԱ-ի այն մասնաբաժինը, որը հարկերի ձևով վերաբաշխվում է այլ երկրներ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները` ատենախոսությունում բացահայտվում է, որ եթե 2007թ. հարկերի միայն 0.6տոկոսն էր վերաբաշխվում այլ երկրներ, ապա հետագում 2010թ.` 2.9 տոկոսը, 2011թ. 2.3տոկոսը, այսինքն` աճել է 2007թ. համեմատ մոտ 4-5 անգամ: Բնականաբար, գլոբալացման արդյունքում ՀՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտների մոտ 2.5-3 տոկոսը չի օգտագործվում Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով, այլ ծառայում է զարգացած երկրների բարգավաճման նպատակին: Հեղինակի պնդմամբ դրանով էլ հենց պայմանավորված է նշված երկրների և դրանց կողմից հիմնադրված միջազգային ֆինանսավարկային կազմակերպությունների շահագրգռվածությունը մեծածավալ վարկեր տրամադրել թերզարգացած երկրներին: Վերոնշյալով է հիմնականում պայմանավորված նաև դրանց կողմից տրամադրվող դրամաշնորհները` առավել մեծ ծավալների վարկային բեռի տրամադրում երկրներին: Նշվում է նաև, որ բնականաբար նման գործարքները բազմիցս քննադատվել են թե՛ արևմտյան և թե՛ հայրենական մասնագետների կողմից, վկայակոչելով վերջին տարիներին դեֆոլտային իրավիճակներում հայտված մի շարք երկրների փորձը, և դրա պատճառը նրանք համարում են հենց այդ կազմակերպությունների գործունեությունը, մասնավորապես ԱՄՀ-ի և համաշխարհային բանկի կողմից տրամադրված մեծածավալ վարկերը:

*Ատենախոսության երրորդ` «ՀՀ հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և դրանց մեղմացման ուղիները»* գլխում ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականության մանրամասն ուսումնասիրության, մասնավորապես ՀՀ ՄԺԾԾ-ի սահմաններում ընդունված հարկաբյուջետային քաղաքականության հիմնադրույթներին և դրանց կիրառման արդյունքների հետազոտմամբ, բացահայտվել են բնագավառում առկա հիմնախնդիրները, և մշակվել է դրանց լուծմանն ուղղված միջոցառումների համակարգ:

Անդրադառնալով ՀՀ ՄԺԾԾ-երին նախատեսված հարկային քաղաքականության հիմնադրույթներին բացահայտվում է, որ ՀՀ հարկային քաղաքականության հիմնական նպատակը հարդիսանում է սոցիալական խնդիրների լուծումը, և այդ նպատակին հասնելու համար տնտեսության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացման խնդիրների լուծումը: Բնականաբար, վերը նշվածներից ելնելով ՀՀ հարկային քաղաքականության ռազմավարության գերակա ուղղությունները ճիշտ են ընտրված: Նշվում է նաև, որ, ըստ վերոհիշյալ ծրագրերի, հիմք ընդունելով պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային իրական ծավալները, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2012-2014թթ ծախսերի միջին տարեկան մակարդակը պահպանել ՀՆԱ-ի 24.3-24.1% սահմաններում: Համեմատելով նախորդ

հինգ տարիների տվյալների հետ, երբ նշված ցուցանիշը տատանվում էր 15.5-16.5% սահմաններում նախատեսվում է ավելացնել պետական բյուջե հավաքագրվող հարկերի ծավալները, և հիմնականում կառավարությունը պատրաստվում է վերոհիշյալը իրականացնել հիմնականում հարկային վարչարարության բարելավման միջոցով: Չհամաձայնվելով նման մոտեցման հետ, ատենախոսությունում նշվում է, որ հարկերի հավաքագրման գործընթացում շեշտադրումը դնել հարկային վարչարարության վրա անարդյունավետ է, ընդհակառակը՝ բազմաթիվ տեսաբանների, մասնագետների կարծիքով կոշտ վարչարարությունը ունի հակառակ, բացասական ազդեցություն հարկային քաղաքականության արդյունավետության նկատմամբ:

Աղյուսակ 3

ՄԺԾԾ-ի հիմքում դրված հիմնական տնտեսական չափորոշիչներ<sup>12</sup>

Չափորոշիչ	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
	Փաստ	Փաստ	Փաստ	Փաստ	Ծրագր	Պլան	Պլան	Պլան
Տնտեսական աճ(ՀՆԱ % փոփոխություն)	13.7	6.9	-14.1	2.1	4.6	4.2	4.5	4.8
Ներդրումների մակարդակ (Ներդրում/ՀՆԱ %)	37.8	40.9	34.7	33.4	31.0	31.0	30.8	30.3

Դիտարկելով մակրոտնտեսական ցուցանիշների զարգացման հեռանկարային գնահատումները շեշտում է, որ տնտեսական աճի, այսինքն՝ ՀՆԱ-ի աճի, ներդրումների մակարդակը 2011-2014թթ. համարյա թե փոփոխություն չեն կրում, մնացել են նույն մակարդակին, ինչը բուրգովի չի գնահատվում դրական և հարկային, և ընդհանրապես հարկաբյուջետային քաղաքականության տեսանկյունից: Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործում համակարգի բարելավումը պետք է ուղղված լինի ոչ թե հարկային վարչարարության ուժեղացմանը, այլ հարկային մեխանիզմի բարելավմանը, որը ըստ էության որոշ վերապահումներով 1997թ.-ից մինչ օրս լուրջ, էական փոփոխության չի ենթարկվել: Միաժամանակ նշում է, որ պետական կապիտալ ներդրումները նվազման միտում ունեն օրինակ՝ 2011 թվականին իրական կապիտալ ներդրումները աճել են 2.9 տոկոսով՝ ի հաշիվ մասնավոր ներդրումների 8.3 տոկոս աճի, սակայն պետական ներդրումները նվազել են 16.8 տոկոսով և մինչև 2014թ. կնվազի ևս 16.7 տոկոսով:

Ամփոփելով վերոհիշյալը, աշխատությունում նշվում է, որ ՀՀ պետական ներդրումային քաղաքականության ուղղվածությունը դեպի մասնավոր ներդրումներն են: Սակայն, եթե զարգացած երկրներում նման քաղաքականությունը կարող է արդյունավետ լինել, որովհետև խոշոր վերագոյային կորպորացիաները տիրապետում են մեծ ծավալի կուտակված կապիտալի, մրցունակ են շատ երկրների շուկաներում, ունեն հզոր ենթակառուցվածքներ, բնականաբար ունակ են և ունեն հնարավորություններ կատարելու խոշոր ներդրումներ նույնիսկ այնպիսի ծախսատար ճյուղերում, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, ապա նույնը չի կարելի ասել հայկական կազմակերպությունների վերաբերյալ. նախ բացակայում են համապատասխան մեծության կապիտալի կուտակումներ ուղղակի ներդրումներ կատարելու և որևէ խոշոր ներդրումներ իրականացնելու համար, այդ պատճառով հիմնականում դիմում են վարկային ռեսուրսների օգնությանը, որոնց գինը՝ բանկային տոկոսադրույքները, ՀՀ-ում բավականին բարձր են՝ 16-20 տոկոս և ավելին, բացասական դիֆերենցիալի պայմաններում կամ սննկանում են, կամ էլ ներդրումներ չեն կատարում, կամ էլ մտնում են ստվեր՝ հարկ վճարելու փոխարեն վարկի տոկոս են վճարում: Ըստ հեղինակի՝ նման պայմաններում կրճատել պետական ներդրումների ծավալը անթույլատրելի է: Նոր զարգացող երկրներում, նամանավանդ հետձգնաժամային տարիներին հավաքագրված

<sup>12</sup> Հայաստանի Հանրապետության 2012-2014 թվականների պետական ՄԺԾԾ է 2011թ. էլեկ. տարբ. էջ49:

պետական եկամուտները պետք է ծառայեն տնտեսությունում անմիջականորեն ներդրումներ կատարելու ձևով օգնել տնտեսվարող սուբյեկտներին ընդլայնել իրենց տնտեսական գործունեությունը, որն ի վերջո հետագայում կնպաստի հարկային մուտքերի ավելացմանը: Հայաստանի Հանրապետության նման երկրում, առավել ևս հետձգնաժամային ժամանակաշրջանում, երբ տնտեսությունը անկում է ապրում կամ էլ աճի տեմպերը նվազում են, աճում է գործազրկությունը, նոր դասականների տեսությունից (պետական ներդրումների բացառում) պետք է միանշանակ հրաժարվել և հարկային քաղաքականության մշակման հիմքում դնել Ձ. Քեյնսի տեսությունը, այսինքն՝ պետական ներդրումների միջոցով նպաստել տնտեսության աստիճանական զարգացմանը, քանի որ վերջինս, ինչպես նաև գործազրկության կրճատումը ուղիղ համեմատական է հարկային եկամուտների աճին: Իհարկե, պետական ներդրումները պետք է լինեն ինչպես ուղղակի ներդրումների տեսքով այն կազմակերպությունների կանոնադրական հիմնադրամում մասնակցություն ձեռք բերելու ձևով, որոնց զարգացումը գերակա նշանակություն ունի պետության համար, օրինակ 2012-2014թթ. ՄԺԾԾ ծրագրով նախատեսված ոլորտների կազմակերպություններում (մասնավորապես՝ գյուղատնտեսություն, ջրային տնտեսություն, ճանապարհային տնտեսություն և էներգետիկա, ենթակառուցվածքների վերականգնման), խիստ անհրաժեշտության դեպքում նաև սուբսիդիաների տրամադրման միջոցով: Վերջիններս ֆինանսավորման անարդյունավետ միջոց են համարվում այն պարզ պատճառով, որ անվճար, անհատույց ստացված գումարները որպես կանոն տնտեսավարող սուբյեկտների կողմից բավականին անարդյունավետ են օգտագործվում: Բացի այդ, վերջինս կոռուպցիայի զարգացման պատճառ է հանդիսանում: Դրանից ելնելով, առաջարկում ենք տնտեսությունում պետական ներդրումները կատարել հետևյալ մեխանիզմով՝ անտոկոս փոխառությունների ձևով, բայց այն պայմանով, որ վերջինս անմիջականորեն կապված լինի հարկային վճարումների հետ: Ատենախոսությունում նշվում է, որ փոխառությունները ներդրումների ֆինանսավորման առավել արդյունավետ միջոց են, որովհետև նախ դրանք անհրաժեշտ է վերադարձնել՝ մի կողմից պետական բյուջեն ետ կստանա իր ներդրված գումարները, մյուս կողմից տնտեսավարող սուբյեկտները ստացված միջոցները հնարավորինս արդյունավետ կօգտագործեն և կվերցնեն այնքան, որքան իրենց տվյալ ներդրումային ծրագրի համար անհրաժեշտ է, քանի որ այդ գումարները փոխառություններ են և ոչ թե անվերադարձ դրամաշնորհներ: Բացի այդ, եթե փոխառություն ստացած կազմակերպությունը չի ապահովում սահմանված շահութաբերության (որպես կանոն համաշխարհային պարակտիկայում ընդունված է շահութաբերության նվազագույն նորման 5%, այսինքն՝ շրջանառության հասույթի 1%) մակարդակը՝ 10% մակարդակը և չի վճարում դրան համապատասխան հասույթի հասույթի (առանց ԱԱՀ-ի) 2%-ի չափով շահութահարկ, ապա գանձել տվյալ կազմակերպությունից պետական բյուջե նշված 2%-ը որպես տուգանք և ապագայում տվյալ կազմակերպությունը կզրկվի նման արտոնյալ պայմաններով ֆինանսական միջոցներ ձեռք բերելուց: Բնականաբար, տնտեսվարող սուբյեկտին առավել նպատակահարմար է պետությունից 2%-ով ստանալ փոխառություն, քան թե առևտրային բանկից 16-20 %-ով վարկ վերցնել դրա հետ կապված թղթաբանության, գրավի հետ կապված դժվարություններով: Իսկ պետությունը կապահովի նվազագույնը 2% շահութահարկ, հետևաբար կմեծանան հարկային մուտքերը պետական բյուջե: Բացի այդ, նշված չափով կազմակերպությունը ստիպված է գործել իրավական դաշտում, այլ ոչ թե ստվերում, ինչի արդյունքում կվճարվեն բյուջեներ նաև այլ հարկատեսակներ: Վերոհիշյալ փոխառությունների տրամադրման գործընթացը հեղինակի պնդմամբ նպատակահարմար է ֆինանսների նախարարությունը իրականացնի Համահայկական բանկի միջոցով, այլ ոչ թե որևէ առևտրային բանկի, որպեսզի տոկոսադրույքի բարձրացման հարց չառաջանա, քանի որ առևտրային բանկերը, ստանալով բավականին բարձր վարկային տոկոսադրույքներ, նույնիսկ չեն գտնվում խոշոր հարկատուների առաջին երեք տասնյակում: Այդ

պատճառով հնարավորություն տալ վերջիններին եկամուտ ստանալ նաև պետական միջոցների հաշվին, անարդյունավետ է:

Փաստ է, որ ոչ ՀՀ «Հարկերի մասին» օրենքում, ոչ էլ հարկային օրենսդրությամբ չի տրվել «հարկային վարչարարություն» հասկացության սահմանումը, և բոլորովին էլ պարզ չի դրա բովանդակությունը ու կոնկրետ ինչ մեթոդներով պետք է իրականացվի վերջինս: Գործնականում երկար տարիների փորձը ցույց է տալիս, որ ՀՀ-ում «հարկային վարչարարությունը» հանգում է կոշտ միջոցների կիրառմանը, այսինքն՝ վերահսկողության միջոցառումների իրականացմանը, այն է՝ հաճախակի կատարվող ստուգումների և դրանից բխող հաճախ ոչ տեղին տուգանքների սահմանմանը և գանձմանը, ինչը հարկատուների մոտ առաջացնում է իրավացի վրդովմունք, իսկ հետևանքը գործունեության դադարեցումն է և ՀՀ-ում կուտակված ֆինանսական միջոցների արտահանումը այլ երկրներ, օրինակ՝ հարևան Վրաստանի հանրապետություն, որտեղ հարկային բեռը ցածր է, իսկ հարկային վարչարարությունը՝ բավականին մեղմ: Ամփոփելով հարկային վարչարարության վերաբերյալ հայ տնտեսագետների մոտեցումները, մատնանշում է, որ ՀՀ հարկային վարչարարության խստացումները ուղղված են «... տնտեսության ստվերային հատվածի կրճատմանը...», քանի որ միշտ քաղաքականություններ, ինչպես նաև ԱՄՆ Հայաստանում հարկային եկամուտների մակարդակը գնահատել է շատ ցածր»<sup>13</sup>: Սակայն, ինչպես նշվում է, ստվերի նախապայմանները թաքնված են ոչ միայն հարկային քաղաքականության համատեքստում, այլ դրանք շատ խորը արմատներ ունեն և պետք է վերացնել այդ արմատները, այլ ոչ թե ծառի ճյուղերը: Իսկ ՀՀ-ում կիրառվող ներկայիս հարկային վարչարարությունը անբարեխիղճ է դարձնում նաև իր բնույթով պարտաճանաչ հարկատուներին: Չեղինակի կարծիքով ՀՀ-ում ստվերային տնտեսության բարձր մակարդակը պայմանավորված է նաև հետևյալ կարևորագույն պատճառով՝ բանկային վարկի բավական բարձր տոկոսադրույքով: Ինչպես գիտենք, ֆինանսական լծակի օգտագործումը բավականին արդյունավետ է ՀՀ-ում, որովհետև հայ գործարարների մեծ մասը դեռևս չեն տիրապետում խոշոր կապիտալի, և հաճախ վարկը տնտեսական գործունեության իրականացման հիմնական ֆինանսական միջոցն է: Իսկ ձեռնարկատիրական բանկային վարկերի տոկոսադրույքը ՀՀ-ում տատանվում է 16-20 տոկոսի սահմաններում: Շուկայական տնտեսվարման երկար տարիների փորձ ունեցող երկրներում նորմալ շահութաբերության նորմա համարվում է 5 տոկոսը: Հայտնի է նաև, որ վարկի տոկոսադրույքի վճարման աղբյուրը շահույթն է: Այդ պատճառով նշված երկրներում վարկի տոկոսադրույքը փոքր է 5 տոկոսից, որպեսզի վարկառուն կարողանա վճարի տոկոսագումարը և իրեն համար էլ ապահովի շահույթի որոշակի մաս:

Դիտարկելով վերոհիշյալը, որ եթե ՀՀ-ում շահութաբերության խելամիտ նորման ընդունենք 10 տոկոսը, նկատի ունենալով այն փաստը, որ որոշ ծախսատեսակներ, ինչպիսիք են բնապահպանական միջոցառումների, բարձր գովազդային, նոր տեխնիկա, տեխնոլոգիաների ձեռք բերման (ՀՀ փեռնարկությունները մեծամասամբ դեռևս աշխատում են հին տեխնիկա, տեխնոլոգիաների հիման վրա) և այլ ծախսեր փոքր տեսակարար կշիռ են կազմում ինքնարժեքում, ապա 10 տոկոս շահութաբերության պայմաններում ինչպես ձեռնարկատերը վճարի բանկային 16-20 տոկոսի տոկոսագումարը, դրա հետ մեկտեղ կոռուպցիոն ծախսերի վճարում կատարի, որը նույնպես շահույթի հաշվին է ֆինանսավորվելու: Բնականաբար իրավիճակից դուրս գալու ամենամպատակահարմար միջոցը ստվերում հայտնվելն է: Հարկային մարմինները ամեն ամիս ստուգումներ չեն իրականացնում, բացի այդ կոռուպցիոն մեթոդներով կարելի խուսափել հարկային օրենսդրության խախտման համար տուգանքների սահմանումից, իսկ բանկերը ամեն ամիս վերահսկում են տոկոսագումարների վճարումները և ուշացումների դեպքում վաճառվում է գրավի

<sup>13</sup>Վ.Հարությունյան Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում: Ե.2003: էջ 110:

առարկան: Պետական բյուջեի հարկային եկամուտները անհամեմատ կաճեն, եթե բանկային տոկոսադրույքները համապատասխանեցվեն տնտեսական շահութաբերության նորմային: Ինչպես տեսնում ենք, հարկային քաղաքականության արդյունավետությունը անմիջականորեն կախված է ընդհանրապես ֆինանսական ոլորտի արդյունավետությունից՝ մասնավորապես վարկային քաղաքականությունից: Այս տեսանկյունից նպատակահարմար է ԿԲ-ի հետ համատեղ մշակել միջոցառումներ բանկային վարկի տոկոսադրույքի իջեցման ուղղությամբ: Նախ ԶԶ ԿԲ-ը պետք է վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցնի համապատասխան մակարդակի(ներկայումս ըստ ԶԶ ԿԲ կանոնակարգի բանկերը պետք է վարկի տոկոսադրույք սահմանեն ոչ բարձր, քան ԿԲ-ի կողմից սահմանված հաշվարկային տոկոսադրույքի կրկնապատիկն է): Բացի այդ, առաջարկում ենք նշված կանոնը խախտելու դեպքում սահմանել այնպիսի մեծության տուգանք, որ բանկերին ձեռնտու չլինի խախտել այն:

Անդրադառնալով ԶԶ հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման նպատակով հարկային համակարգի մշտական բարելավման միջոցառումների մշակմանը և իրականացման վերաբերյալ հայրենական տնտեսագետների տեսակետներին՝ հեղինակը նկատում է, որ դրանք հիմնականում վերաբերում են պետական բյուջեի հարկային եկամուտների մեջ ուղղակի և անուղղակի հարկերի տեսակարար կշիռը փոփոխելուն, մասնավորապես ԱԱԶ-ի դրույքաչափը մինչև 8-12 տոկոսի նվազեցնելու միջոցով, առանձին հարկատեսակների գծով նախատեսված արտոնությունները վերանայելուն: Միաժամանակ գտնում է, որ ընդհանրապես հարկային քաղաքականության կատարելագործման առաջարկությունները, որոնք պարունակում են դրույքաչափի նվազեցումներ առաջին հերթին պետք է կատարվեն լուրջ հիմնավորումների հիման վրա և պետք է ուղեկցվեն կոնկրետ աղբյուրի մատնանշումով, որտեղից կարող են փոխհատուցվել զոնե սկզբնական շրջանում չստացվող մուտքերը, այլապես դրույքաչափի նվազեցումը միասնական բյուջետային գործընթացի շրջանակներում հաջորդ տարվա պետական բյուջեում խորացնելու է դեֆիցիտը, որի արդյունքում անխուսափելիորեն ընդլայնվելու են ներքին կամ արտաքին պետական պարտքի ծավալները:

Համաձայնվելով տեսաբանների այն կարծիքի հետ, որ, իսկապես, անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել ԱԱԶ-ի գանձումը կարգավորող օրենսդրության մեջ, առաջարկվում է ոչ թե ընդհանրապես նվազեցնել ԱԱԶ-ի դրույքաչափը, այլ կիրառել ԱԱԶ-ի դիֆերենցված դրույքաչափեր 10-30 տոկոսի սահմաններում, ինչպես դա կատարվում է ԵՄ երկրներում, ՌԴ-ում և այլն: Մասնավորապես այն ապրանքատեսակների նկատմամբ, որոնք համարվում են բնակչության համար առաջին անհրաժեշտության ապրանքատեսակներ, ծառայությունների, ինչպես նաև գերակա ոլորտների զարգացմանը նպաստելու տեսանկյունից անհրաժեշտ և ծախսատար ապրանքատեսակների նկատմամբ կիրառել ցածր՝ 10 –15 տոկոս դրույքաչափ, իսկ շքեղության, ոչ առաջին անհրաժեշտության առարկաների, ծառայությունների նկատմամբ կիրառել բարձր դրույքաչափ՝ 30 տոկոս: Օրինակ՝ դեղորայքի նկատմամբ արտոնության վերացումը և 20 տոկոս ԱԱԶ-ով հարկումը բավականին սոցիալական լարվածություն առաջացրեց, ինչը հնարավոր է մեղմել զոնե 10 տոկոս հարկի դրույքաչափը նվազեցնելով: Դրա փոխարեն կարելի է 30 տոկոսով ԱԱԶ-ով հարկել, օրինակ շքեղության առարկաները, 4, 5 աստղանի հյուրանոցների սպասարկման ծառայությունները: ԱԱԶ-ի դիֆերենցված դրույքաչափեր երկար տարիներ կիրառվում է բազմաթիվ և՛ զարգացած, և՛ նոր զարգացող երկրներում և իրեն արդարացնում է, որ միջև այժմ չեն հրաժարվում, ապա ինչու ԶԶ-ում չկիրառել նման արդյունավետ հարկային համակարգ: Բացի այդ պարզաբանվում է, որ, իհարկե, խնդիրը նրանում է, որ ապրանքատեսակների և ծառայությունների դասակարգումը ըստ անհրաժեշտության, գործարար նշանակության, շքեղության բավականին բարդ, ծախսատար գործընթաց է, սակայն իրականալի. նախ այդ բնագավառում առկա է միջազգային փորձը և կարելի է

օգտվել նրանց կողմից մշակված ապրանքացուցակներից, և բացի այդ, ժամանակակից տեխնիկական միջոցները հնարավորություն են տալիս բավականին արագ և փոքր ծախսերով իրականացնել նշված գործողությունները: Իսկ արդյունքում հարկային բեռի, մասնավորապես անուղղակի հարկերի գծով բեռը կվերաբաշխվի ի օգուտ անապահով, կամ ցածր եկամուտ ունեցող խավերի(որոնք հիմնականում օգտագործում են միայն առաջին անհրաժեշտության ապրանքատեսակներ):

ՀՀ հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից ուղղակի հարկատեսակների դերի բարձրացումը կապվում է տարբեր ուղղակի հարկատեսակների գանձումը կարգավորող օրենսդրության բարելավման՝ մասնավորապես «շահութահարկի» մասին ՀՀ օրենքների հետ: Հայտնի է, որ շահութահարկը անմիջականորեն կախված է ձեռնարկատիրական գործունեության ֆինանսական արդյունքից: Շահութահարկի ծավալների մեծացումը նախ պայմանավորված է ՀՆԱ-ի աճով, հետևաբար գործարարության զարգացմամբ, այսինքն՝ ներդրումների ծավալների մեծացմամբ: Մինչև օրս ըստ էության նոր դասականների տեսության համաձայն խթանվում է ձեռնարկատիրությունը սահմանելով ցածր դրույքաչափ՝ 20տոկոս: Սակայն ներդրումային բուռն աճ ՀՀ-ում հայրենական գործարարների կողմից չի նկատվում, և դրանից բխում է հետևյալ հետևանքը՝ շահութահարկի ցածր տեսակարար կշիռը ընդհանուր հարկային եկամուտների կազմում՝ մոտ 11-13տոկոս: Դա բացատրվում է նախ ստվերային տնտեսության բարձր մակարդակով և, իհարկե, համապատասխան օրենսդրության թերություններով:

1997թ., երբ ընդունվեց «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, նախատեսվում էր դիֆերենցված դրույքաչափերի կիրառում. մինչև 7մլն հարկվող շահույթի դեպքում կիրառվում էր 15տոկոս դրույքաչափ, իսկ դրանից բարձր հարկման բազայի դեպքում կիրառվում էր 25տոկոս: Բայց հետագայում, պատճառաբանելով չարաշունչների բարձր մակարդակը, 2000թ. օրենքում փոփոխություն կատարելու արդյունքում հաստատվեց շահութահարկի միասնական՝ 20տոկոս դրույքաչափը: Ըստ էության, նման մոտեցումը կործանարար էր փոքր և միջին կազմակերպությունների համար, որովհետև դրանց համար շահութահարկի բեռի բարձրացումը կրճատեց առանց այն էլ սուղ ներդրումային հնարավորությունները, դրա հետ միասին վերացվեց ԱԱՀ-ի արտանությունները՝ կապված փոքր ծավալի շրջանառության հետ: ՓՄՁ-երը առավել խոցելի են տնտեսական իրավիճակի ցանկացած տատանումների նկատմամբ, և նման հարկային քաղաքականության իրականացումը բնականաբար հատկապես ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակում վերջիններիս կանգնեցնում է սնկկացման եզրին:

Իհարկե, պետք է նշել, որ ՀՀ հարկային քաղաքականության բարելավման ուղղվածություն է նկատվում դեպի ՓՄՁ-ի խրախուսումը՝ 2011թ.-ից տարեկան հարկվող փոքր՝ 58.35մլն դրամը չգերազանցող շրջանառություն ունեցող անձիք ԱԱՀ վճարողներ չեն հանդիսանում<sup>14</sup>: Սակայն գտնում է՝ դա բավարար չէ ՓՄՁ-ի գոյատևումը և զարգացումը ապահովվելու համար: Չէ՞ որ ՓՄՁ-երը հանդիսանում են շուկայական ազատ մրցակցային տնտեսության հիմքը, իսկ խոշորները, որպես կանոն, գտնվում են մենաշնորհային, մրցունակ պայմաններում և նրանց ֆինանսական հնարավորությունները անհամեմատ բարձր են թե՛ մրցակցակցային պայքարում, թե՛ ներդրումային ներուժով և թե՛ ճգնաժամային իրավիճակներին դիմակայելու գործընթացում: Հայտնի է նաև, որ ՀՀ տնտեսությունը խիստ մենաշնորհային է, որտեղ իշխող են հանդիսանում խոշոր կազմակերպությունները, որոնք թելադրում են շուկայում գործելու պայմանները, ինչն էլ ավելի է բարդացնում ՓՄՁ-երի ֆինանսական վիճակը: Այդ է պատճառը, որ ներկայումս ՀՀ կառավարության գերակա խնդիրներից է հակամենաշնորհային, ազատ մրցակցային շուկայական տնտեսավարման ապահովումը:

<sup>14</sup> «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք էջ 87:

Վերոհիշյալից ելնելով՝ առաջարկում ենք նորից վերադառնալ շահութահարկի դիֆերենցված տոկոսադրույքների կիրառմանը՝ օգտագործելով հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ 4

Շահութահարկի դիֆերենցված դրույքաչափեր

հարկվող շահույթի մեծություն	հարկի մեծություն
մինչև 2.5մլն դրամ	10%
2.5 – 5.8 մլն դրամ	250 000դրամ +2.5մլն-ը գերազանցվող մասի 15%
5.8մլն դրամ և ավելի	1 120 000դրամ +5.8մլն գերազանցող մասի 25%

Ինչպես տեսնում ենք, հարկվող շահույթի նվազագույն բազա է ընդունվել 2.5մլն դրամը, որի հիմքում ընկած է փոքր կազմակերպությունների հասույթի ծավալը՝ 58.35մլն դրամ: Սանդղակի երկրորդ աստիճանում վերջնասահմանը ընդունվել է հիմք վերցնելով 10% շահութաբերություն: ԵՄ երկրներում 5% շահութաբերության մակարդակը գերազանցելու դեպքում շահութահարկի դրույքաչափը շեշտակի բարձրանում է մինչև 40%: Այնպես որ մեր կողմից առաջարկված 25% մակարդակը լիովին արդարացված է և, նույնիսկ, ցածր:

Մատնանշելով շահութահարկի նվազագույն գումարի կիրառման արդյունքում տվյալ հարկատեսակից պետական բյուջեի մուտքերի նկատելի ծավալների ավելացումը, հեղինակը գտնում է, որ, այնուամենայնիվ, պետք է փոփոխություն կատարել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում՝ կապված «շահութահարկի նվազագույն գումարի» հետ, վերջինս առավել արդյունավետ դարձնելու նպատակով: Վերոհիշյալից ելնելով, ինչպես նաև հարկային բեռի՝ ի օգուտ ՓՄՁ-ների վերաբաշխման տեսանկյունից առաջարկվում է դիֆերենցել նաև շահութահարկի նվազագույնի մակարդակը համաձայն հետևյալ սանդղակի.

աղյուսակ 5

Շահութահարկի նվազագույն գումարի հաշվարկ

հարկվող շահույթի մեծություն	շահութահարկի նվազագույնի մակարդակը
մինչև 2.5մլն դրամ կամ 5% շահութաբերություն	եռամսակային շրջանառության 1%
2.5 – 5.8 մլն դրամ կամ 10% շահութաբերություն	եռամսակային շրջանառության 2%-ը
5.8մլն դրամ կամ 10% և ավելի շահութաբերություն	եռամսակային շրջանառության 5%-ը

Ամփոփելով, նշվում է, որ ընդհանրապես հարկային համակարգի բարելավումը հայրենական տեսաբանների մեծամասնության կողմից դիտվում է՝ որպես դրույքաչափի փոփոխություն, իսկ հարկման բազայի ընդլայնման խնդիրներին առավել հազվադեպ է ուշադրություն դարձվում, և շեշտվում է, որ ըստ էության հարկման բազայի ընդլայնումը կարող է պատճառ հանդիսանալ զանձվող հարկերի ծավալների ավելացման համար: Ուղղակի հարկատեսակների հարկման բազայի որոշման համար սահմանվում է որպես նվազեցնող եկամուտ շահաբաժինները, դիվիդենդները: Համապատասխան օրենսդրությունների ընդունման ժամանակ ներդրումները խրախուսելու նպատակով հարկումից ազատեցին ներդրումներից ստացված եկամուտները: Ատենախոսությունում

նշվում է, որ ներկայումս պետք է վերանայել վերոհիշյալ նվազեցումը, քանի որ ՀՀ-ում բավականին խոշոր ներդրումներ են կատարել արտասահմանյան կազմակերպությունները, որոնք նույնպես օգտվում են տվյալ արտոնությունից և Հայաստանյան աղբյուրներից ստացված շահաբաժինները արտահանում են իրենց երկիր: Առաջարկում է, որպեսզի ՀՀ-ում կատարված ներդրումներից ստացված շահաբաժինները նորից ծառայեն մեր հանրապետությանը. շահութահարկի տեսանկյունից շահաբաժինների նվազեցումը կատարվի այն չափով, որ մասով նորից կօգտագործվի ներդրումային նպատակով: Իհարկե, դրան զուգահեռ պետք է սահմանվի շահաբաժինների նվազեցման նվազագույն սահման, որը, բնականաբար, չի հարկվի: Նման համակարգ կիրառվում են զարգացած երկրներում, ՌԴ-ում և Չինաստանում: ՀՀ-ում նույնպես անհրաժեշտ է կիրառել նվազեցումների նման համակարգ, որի դրական արդյունքը կլինի հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացումը:

**Եզրակացություններ:** Այստեղ հանրագումարի են բերվել ատենախոսության հիմնական արդյունքները: Մասնավորապես՝

- ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ առկա «հարկ» հասկացության տարբեր սահմանումները հիմնականում մատնանշում են հարկի պարտադիրությունն ու անհատույց լինելը և նախանշում են վերջինի գլխավոր նպատակը, այն է՝ պետության ֆինանսական միջոցներով ապահովումը,
- ներկայումս միջազգային պրակտիկայում կիրառվող հարկային քաղաքականության տեսական հիմքում ընկած են երկու հիմնական տեսություններ՝ քեյնսականության և մոնետարիզմի կամ նոր դասականների տեսությունները,
- ժամանակակից գլոբալացման արդյունքում տարբեր երկրների հարկային քաղաքականությունները միջազգային մասշտաբով միասնականացվում, համահարթեցվում են, որոշ դեպքերում նույնիսկ ի վնաս որևէ կոնկրետ երկրի շահերին,
- ժամանակակից գլոբալացման պայմաններում արտաքին պետական պարտքի միջոցով առավել թույլ զարգացած երկրներում հավաքագրված հարկերը միջպետական, միջազգային վարկերի և դրանց տոկոսների ձևով վեր են ածվում վարկատու երկրների բյուջեների համալրման աղբյուրի և ապահովում վերջիններիս տնտեսության աճը: Արդյունքում ներկայումս հարկի վերաբաշխողական բնույթը միջազգայնացվել է, և մի երկրում ստեղծված ՀՆԱ-ն հարկի, ինչպես նաև պետական պարտքի միջոցով վերաբաշխվում է այլ երկրների՝ որպես կանոն զարգացած երկրների միջև,
- հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման գործընթացում կարևոր է դրա վերլուծության գործուն, իրատեսական մեթոդաբանության առկայությունը: Հարկային քաղաքականության արդյունավետության որոշման նպատակով պետք է հստակեցնել դրա յուրաքանչյուր բաղադրիչի բովանդակությունը, տեղն ու դերը վերջինիս իրականացման գործընթացում, յուրաքանչյուրի արդյունավետության որոշման առաջարկները, որոնք էլ կկազմեն գնահատման ցուցանիշների համակարգը, քանի որ դրանցից յուրաքանչյուրի ազդեցությունը ընդհանուր հարկային քաղաքականության արդյունավետության վրա կարող է տարբեր լինել: Օրինակ՝ ՀՀ-ում կիրառվող հարկային մեխանիզմը իր բնույթով բավականին մեղմ է, սակայն հարկային վարչարարության կոշտությունը, հարկային քաղաքականությունը ընդհանուր առմամբ դարձնում է կոշտ,
- ներկայումս ընդունված է հարկային բեռի հաշվարկման հետևյալ ցուցանիշը՝ հարկային եկամուտների և ՀՆԱ-ի հարաբերակցությունը: Ելնելով վերոհիշյալ տեսական հիմքերից անհրաժեշտ է հարկային բեռի ծանրությունը դիտել բյուջետային ֆինանսավորման համատեքստում: Այդ նկատառումից ելնելով՝ անհրաժեշտ է վերը նշված «հարկային բեռի» ցուցանիշը (հավաքագրված հարկերի / ՀՆԱ) համադրել պետական միջոցների հաշվին ՀՆԱ-ի ֆինանսավորման ծավալների (պետական բյուջեից տնտեսության իրական հատվածին տրամադրվող միջոցների ծավալի) ու սոցիալական ուղղության ծախսերի հանրագումարի և ՀՆԱ-ի հարաբերակցության հետ,

որպեսզի որոշվի, թե որքանով է հարկային բեռի ծանրությունը թեթևանում պետական միջնաժամկետ ծրագրերի ֆինանսավորմամբ, որն առավել ճիշտ կարտացույի տվյալ երկրի հարկային բեռի մակարդակը,

- ՀՀ-ում որդեգրված հարկային քաղաքականության հիմքում ընկած է արևմտյան երկրների կողմից պարտադրված մոնետարիստական տեսությունը,

- ՀՀ պետական բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրը հանդիսացել են հարկերը, որոնք կազմել են ընդհանուր եկամուտների մոտ 80-95%: Ուստի կարելի է նշել, որ հարկերը, կատարելով ֆիսկալ գործառույթը, հանդիսանում են պետական ֆինանսական միջոցների ձևավորման հիմնական աղբյուրը,

- տեղական բյուջեների հարկային եկամուտները ոչ միշտ են հանդիսանում դրանց ձևավորման հիմնական աղբյուրը, դրանց եկամուտների գերակշռող մասը կազմում են պետական բյուջեից վճարվող պաշտոնական դրամաշնորհները՝ ընդհանուր եկամուտների մոտ 40-60%,

- ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների գերակշռող մասը կազմում են անուղղակի հարկատեսակները՝ ընդհանուրի մոտ 65%-ը, և տարիների ընթացքում այդ հարաբերակցությունը էական փոփոխության չի ենթարկվել: Իսկ ուղղակի հարկատեսակները կազմում են ընդհանուր եկամուտների նկատմամբ մոտ 27%-ը, այլ եկամուտները՝ մոտ 6-8%-ը:

- ՀՀ-ում կիրառվող հարկային քաղաքականությունը, ինչի հիմքում ընկած է միջազգային կազմակերպությունների կողմից պարտադրված մոնետարիստական տեսությունը (տնտեսության զարգացմանը պետության միջամտության բացառում, ցածր հարկային բեռ կոորպորացիաների և ունևոր խավի նկատմամբ, նվազագույն հարկային արտոնությունների կիրառում, ուղղակի հարկատեսակների գերակշռում)՝ առանց հաշվի առնելու մեր երկրի զարգացման առանձնահատկությունները՝ բնակչության գերակշռող մասի եկամուտների անհամեմատ ցածր մակարդակ, գործազրկության բարձր տեսակարար կշիռը, տնտեսավարող սուբյեկտների սուղ ֆինանսական հնարավորությունները, անարդյունավետ է: ՀՀ կառավարությունը պետք է հնարավորինս դիմակայի միջազգային կազմակերպությունների ճնշումներին, որոնք վնասաբեր են ՀՀ-ի համար,

- արտաքին պարտք ունեցող երկրների ազգային եկամուտը պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտների ձևով միջազգային վերաբաշխման է ենթարկվում զարգացած երկրների միջև արտաքին պարտքի սպասարկման միջոցով, և այդ գործընթացը աճի միտում ունի՝ ի վնաս թույլ զարգացած երկրների 2007թ. ՀՀ պետական բյուջեի հավաքագրված հարկերի 3.6 տոկոսը արտաքին պարտքի սպասարկմամբ վերաբաշխվում է զարգացած երկրների միջև, իսկ հաջորդ տարիներին նկատվում է նշված ցուցանիշների աճի միտում. 2008թ. կազմել է 2.3տոկոս, 2009թ.՝ 1.8, 2010թ.՝ 4.6 և 2011թ.՝ 4.0, այսինքն՝ աճել է 2007թ. համեմատ մոտ 4-5 անգամ,

- մակրոտնտեսական ցուցանիշները վերջին հինգ տարիներին և զարգացման հեռանկարում՝ 2012-2014թթ. էական փոփոխություն չեն կրում՝ մնացել են նույն մակարդակին՝ ՀՆԱ-ի աճը տատանվում է 6.9-4.9տոկոսի, իսկ ներդրումների մակարդակը ՀՆԱ-ի նկատմամբ՝ 30-40տոկոսի սահմաններում, ինչը հարկային քաղաքականության արդյունավետության տեսանկյունից բոլորովին չի գնահատվում դրական, քանի որ հարկային եկամուտների ավելացումն ուղղակիորեն կապված է տվյալ երկրում ներդրումների և այդ ներդրումների արդյունքում ՀՆԱ-ի աճի հետ,

- ՀՀ հարկային քաղաքականությանը արդյունավետության բարձրացման և ներդրումների մակարդակը ավելացնելու նպատակով պետական բյուջեի ծախսային ուղղություններում պետք է մեծացնել տնտեսության մեջ կատարվող ներդրումների՝ մասնավորապես բյուջեից տրամադրվող փոխառությունների ծավալները ժամանակակից արդյունավետ մեխանիզմների կիրառման միջոցով, որոնք անմիջականորեն կապված են հարկերի վճարման հետ (եթե կազմակերպությունը չի վճարում պետական բյուջե շահութահարկի նվազագույնը՝ հասույթի 2%-ը, ապա գանձել

տուգանք նշված չափով և զրկել կազմակերպությանը հետագայում մնան արտոնյալ պայմաններով միջոցներ ստանալու հնարավորությունից),

- ընդհանրապես հարկային քաղաքականության կատարելագործման տեսանկյունից նպատակահարմար է փոփոխություններ մտցնել ԱԱՀ-ի գանձումը կարգավորող օենսդրության մեջ: Առաջարկվում է ոչ թե ընդհանրապես նվազեցնել ԱԱՀ-ի դրույքաչափը, այլ կիրառել ԱԱՀ-ի դիֆերենցված դրույքաչափեր 10-30տոկոսի սահմաններում՝ ելնելով ապրանքատեսակների և ծառայությունների անհրաժեշտությունից, կարևորությունից, ինչը կնպաստի նաև հարկային բեռի անհավասար բաշխմանը՝ հօգուտ ցածր եկամուտ ստացողների,

- ՀՀ հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից ուղղակի հարկատեսակների դերի բարձրացման, ինչպես նաև ՓՄՁ-ի զարգացման խթանման, դրանց հարկային բեռի նվազեցման տեսանկյունից պետք է նորից վերադառնալ շահութահարկի դիֆերենցված տոկոսադրույքների կիրառմանը՝ դիֆերենցման հիմք ընդունելով շահութաբերության հետևյալ մակարդակները՝ 5, 10, և 10-ից ավելի մակարդակները, իսկ դրույքաչափեր ընդունել 5, 15, 25 տոկոսները,

- ստվերային տնտեսության կրճատման, հարկային բեռը ի օգուտ ՓՄՁ-ների վերաբաշխման տեսանկյունից անհրաժեշտ է դիֆերենցել նաև շահութահարկի նվազագույն գումարը՝ հիմք ընդունելով շահութաբերության մակարդակը. մինչև 2.5մլն դրամ կամ 5% շահութաբերության դեպքում սահմանել շահութահարկի նվազագույն մակարդակ եռամսակային շրջանառության 1%-ը, 2.9 – 5.8 մլն դրամ կամ 10% շահութաբերության դեպքում՝ եռամսակային շրջանառության 2%-ը, 5.8մլն դրամ կամ 10% և ավելի շահութաբերության դեպքում՝ եռամսակային շրջանառության 5%-ը,

- ուղղակի հարկատեսակների հարկման դեպքում անհրաժեշտ է վերանայել շահաբաժինները, դիվիդենդները որպես նվազեցնող եկամուտ համարելու հողվածք, որպեսզի ՀՀ-ում կատարված ներդրումներից ստացված շահաբաժինները նորից ծառայեն մեր հանրապետությանը, անհրաժեշտ է շահութահարկի տեսանկյունից շահաբաժինների նվազեցումը կատարվի այն չափով, որ մասով նորից կօգտագործվի ներդրումային նպատակով: Իհարկե, դրան զուգահեռ պետք է սահմանվի շահաբաժինների նվազեցման նվազագույն սահման, որը, բնականաբար, չի հարկվի:

Ատենախոսության հիմնական արդյունքներն արտացոլվել են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մուրադյան Դ.Օ., Ապահովագրական շուկայի զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները գիտական հողվածների ժողովածու» – 2(14), Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. Հրատ., 2012թ., էջ 65-70:
2. Մուրադյան Դ.Օ., Հարկային բեռի գնահատման անհրաժեշտությունը և հաշվարկման մեթոդական մոտեցումները «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում հանրապետական գիտաժողովի նյութեր - գիրք 2», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012թ., էջ 98-100:
3. Մուրադյան Դ.Օ., ՀՀ հարկային համակարգի արդյունավետության գնահատականը «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում հանրապետական գիտաժողովի նյութեր - գիրք 2», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012թ., էջ 101-105:

**Мурадян Давид Оганович**  
**Пути повышения эффективности налоговой политики в РА**

Диссертация на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03-“Финансы, денежное обращение и кредит”.

Защита диссертации состоится 28 июня 2013г. в 15:00 на заседании специализированного совета 015 по экономике ВАК РА Ереванского государственного университета по адресу г. Ереван, 0009, ул. Абовяна 52.

**РЕЗЮМЕ**

В настоящее время государственные финансы даже некоторых развитых стран, в частности огромной величины государственного долга, оказались в катастрофически кризисном состоянии, что в условиях глобализации, тесного сращивания финансовых систем государств, выдвигает серьезные проблемы также для других – в финансовом отношении более стабильных стран. В процессе регулирования государственных финансов приоритетная роль принадлежит налогово-бюджетной, в частности – составляющей ее налоговой политике. Налоговые доходы являются основным источником формирования государственных централизованных денежных средств, и в процессе сокращения государственного долга важное значение приобретает увеличение налоговых поступлений государственных бюджетов, что во многом зависит от реализации эффективной налоговой политики. В вышеуказанных условиях возникает необходимость радикальных реформ налоговой политики.

Налоги экономистами рассматриваются также как важная социально-экономическая составляющая современных реформ, с помощью которых государство также может реализовать эффективную социальную политику. Помимо других рычагов, кроме пополнения централизованных денежных фондов, налоги должны использоваться в направлениях обеспечения стабильного развития и стимулирования хозяйственной активности, а также внедрения элементов социальной справедливости.

Тем не менее, в условиях глобализации, выражения изменений налогов, налоговой политики, сохранение темпов экономического роста, проблемы равномерного распределения “налоговой бремени” среди налогоплательщиков пока требуют усовершенствования налоговой политики – посредством повышения значения, роли и эффективности последнего. Диссертация посвящена исследованию проблем налоговой политики, разработке подходов, мероприятий, направленных на повышение эффективности последней, чем и обусловлены актуальность и своевременность темы исследований.

Цель исследования – на основе обследования существующих теоретических подходов к налоговой политике, в результате оценки эффективности налоговой политики, применяемой в РА и в других странах разработать систему действенных, обоснованных мероприятий, направленных на повышение последней. Для достижения этой цели в рамках диссертации выдвинуты следующие задачи:

- исследованы теоретические основы основных понятий налогов, налоговой политики и их отражение в действующем налоговом законодательстве, основные теоретические подходы к оценке налоговой политики, применяемые на практике методы, обследованы экономические и юридические основы реализации налоговой и налогово-бюджетной политики в республике;
- разработан новый, реалистичный подход к расчету налоговой бремени и вычислен показатель налоговой ноши. Исследован степень участия физических и юридических лиц в этом показателе;
- выявлены особенности налоговых политик различных стран в условиях глобализации, а также влияние составляющих финансовой политики в контексте повышения эффективности налоговой политики;

- оценена эффективность осуществляемой в РА налоговой политики и ее составляющих и выявлены недостатки, имеющиеся в указанной области, разработаны мероприятия, направленные на повышение эффективности налоговой политики РА и ее составляющих;

Основные научные результаты и новизна состоит в следующем:

- выявлен международный распределительный характер налога в условиях глобализации, когда посредством погашения внешнего государственного долга и сумм процентов кредитов международных финансово-кредитных организаций, налоги, выплаченные в более слабо развитых странах, перераспределяются среди стран-плательщиков – пополняя бюджеты последних. Выявлен также процесс унификации, сглаживания налоговых политик различных стран, что не всегда отвечает интересам отдельной независимой страны;

- разработан и предложен к практическому применению новый, оригинальный подход к оценке налоговой ноши, согласно которому – в основе расчета налоговой бремени лежат и величина собранных налогов, и средства финансирования, выделенные налогоплательщикам государством;

- выявлена и оценена методология шкалы дифференцированных ставок налога на прибыль и “минимального налога на прибыль”, в основе которой лежит рентабельность коммерческих организаций;

- проанализировано, обосновано и предложено пересмотреть привилегию освобождения от налога на прибыль дивидендов – с целью поощрения иностранных инвестиций, и на этом основании предложено пересмотреть действующие привилегии налога на прибыль для всех организаций и сделать соответствующий “дифференцированный подход”.

## **Muradyan Davit Ohan**

### **Ways of Increasing The Efficiency of Tax Policy in RA**

The dissertation is submitted for pursuing of scientific degree of Doctor of economics in the speciality of 08.00.03 "Finance, Monetary Circulation and Credit".

The defense of the dissertation will take place on June 28, 2013 at 3:00PM at the meeting of specialized council 015 in economics of the Supreme Certifying Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.

Address: 52 Abovyan st., Yerevan, 0009, Armenia.

### **RESUME**

Even in some developed countries municipal finances appear in critical condition mainly because of huge amount of external debt nowadays. In such conditions as globalization and coalescence between countries' financial systems serious problems can be posed to financially stable countries either. The main role in the regulation process of municipal finances belongs to fiscal policy especially to tax policy which is the component of fiscal one. Tax revenues are the main source of municipal centralized monetary funds. Therefore during the process of reduction of municipal debt increasing incomes from taxes in federal budgets become very important. The latter mainly depends on fulfillment of effective tax policy. In this case the need of radical changes in tax policy arises.

Taxes are also considered by economists as an important socio-economic attribute of modern reformation with the help of which a country can perform effective social policy either. With other economic levers, besides replenishment of centralized monetary funds taxes should be used to provide stable development, stimulate economic activity and promote elements of social justice.

Nevertheless in terms of globalization problems of expression of the changes of taxes and tax policy, preservation of the rates of economic growth and equal distribution of tax burden between taxpayers still require improvement of tax policy by raising its meaning, role and efficiency. The current dissertation is dedicated to studying the problems of tax policy, treating approaches and activities for raising its efficiency which determines the urgency and the relevance of the dissertation.

The reason of the research is to process productive and substantiated system for raising the efficiency of tax policies by studying existing theoretical approaches about tax policy and rating the efficiencies of tax policies applied in RA and other countries. To reach the reason the following problems are proposed in the purview of the dissertation

- There have been studied the theoretical basis of main concepts and their reflection in the current tax legislation, the main theoretical approaches of evaluation of the efficiency of tax policy and the methods used in practice. Besides economic and juridical bases of implementing tax and fiscal policies has been investigated in RA,
- A new realistic approach of calculating tax burden has been developed and the index of tax burden has been calculated. The degree of participation of individuals and legal entities in this index has been studied either,
- In terms of globalization the features of various countries' tax policies and the influence of attributes of financial policy on the context of raising the efficiency of tax policy has been discovered,
- The efficiency of tax policy and its attributes implemented in RA has been evaluated and existing defects in the mentioned sphere has been discovered. Besides there has been developed approaches related to increasing the efficiency of tax policy and its attributes in RA.

The main results and scientific novelties of the thesis are the following

- In terms of globalization the internationally distributed origin of tax has been discovered, when by paying external municipal debt and loan interests some amount of taxes payed in underdeveloped countries are distributed between creditor countries and replenish their budgets. It has been also discovered the process of unification of various countries' tax policies, which is not always corresponded to interests of separate, independent countries.
- It has been developed and suggested to implement in practice a new approach of evaluating tax burden according to which both levied amount of taxes and financing measures from state to tax payers are in the basis of calculating tax burden.
- There has been discovered and evaluated a table of differential income tax rates and a differential methodology of the minimal amount of income tax on the basis of which are returns of commercial organizations.
- It has been analysed, explained and valuated the reconsideration of the privilege of not levying the dividends that are related to foreign investments, and based on this ita has been suggested to revise the current privileges of income tax for all companies and make corresponding "differential approach".